# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 26 (1776) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 9, 2016
VOLUME 36, NO. 26 (1776) SATURDAY, JULY 9, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Դարձեալ Նոյն Ձեռագիրը

2017-ի Գարնան Հայաստանի մէջ նախատեսուած են խորհրդարանական ընտրութիւններ, որոնք այս անգամ տեղի պիտի ունենան միայն համամասնական ցուցակներով՝ կուսակցութիւններու եւ կամ կուսակցական դաշինքներու կողմէ ներկայացուելիք թեկնածուներու մասնակցութեամբ:

Հայաստանի անկախացումէն ասդին կայացած գրեթէ բոլոր ընտրութիւնները, ըլլան անոնք նախագահական կամ խորհրդարանական, եղած են խնդրայարոյց եւ յայտարարուած արդիւնքները վստահութիւն չեն ներշնչած ժողովուրդին:

Ընդդիմադրութեան մօտ կը տիրէ այն կարծիքը, որ իշխող հանրապետական կուսակցութիւնը իր զինանոցին մէջ ունի ընտրութիւնները կեղծելու բազմաթիւ հնարքներ, որոնցմէ մէկն ալ «ասպարանքի» վրայ հրապարակուած՝ հանրային կարծիքի հարցախոյզերն են:

Անցեալ շաբաթ հրապարակուեցաւ խորհրդարանական ընտրութիւններու վերաբերեալ առաջին նմանատիպ հարցախոյզը (սոցհարցումը), «Կելլոփ միջազգային ընկերութեան հայաստանեան կազմակերպութիւն» անուամբ ընկերութեան մը կողմէ, որ ոչ մէկ առնչութիւն ունի ամերիկեան հեղինակաւոր «Կալլոփ» հարցախոյզերու ընկերութեան հետ:

Ըստ հրապարակուած տուեալներուն, այսօրուայ դրութեամբ կուսակցութիւններու միջեւ ձայները բաշխուած են հետեւեալ ձեւով. Հանրապետական կուսակցութիւնը 9 տոկոս, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը 8.3 տոկոս, ՀՅԴ՝ 3,2 տոկոս, ՀԱԿ՝ 2,2 տոկոս, «Ժառանգութիւնը» 1,1 տոկոս: Մնացեալ կուսակցութիւնները ստացած են 1 տոկոսէն պակաս:

Անցեալի փորձէն մեկնելով կարելի է այժմէն իսկ կռահել, թէ իշխանութիւնները ինչպիսի խորհրդարան կը պատրաստուին կազմել յաջորդ ընտրութիւններէն ետք: Այս թիւերը բնականաբար պիտի փոխուին ժամանակի ընթացքին: Ընտրութիւններու նախօրեակին Հանրապետական կուսակցութեան տոկոսները պիտի հասնին 50 տոկոսի մօտ, իսկ ընտրութիւններու վերջնական արդիւնքներով՝ 50 տոկոսէն աւելիի:

Այս նոյն ձեռագիրը օգտագործուած է վերջին բոլոր ընտրութիւններու ընթացքին եւ կը կարծուի որ, այս անգամ եւս նոյն պատկերը պիտի պարզուի:

Անկախութենէն 25 տարի ետք կը թուի թէ, Հայաստանի ժողովուրդը դարձեալ պիտի զրկուի ազատ եւ արդար ընտր-ութիւններու մասնակից դառնալու իր տարրական իրաւունքէն:

«ՄԱՍԻՍ»

## Հայաստան Կ՛ողջունէ Ֆրանսայի Խորհրդարանի Որոշումը՝ Ցեղասպանութեան Ժխտումը Քրէականացնելու Մասին

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան ողջունեց Ֆրանսիայի Ազգային ժողովին կողմէ ցեղասպանութեան հերքումը քրէականացնող նոր օրինագծի ընդունումը:

«Միանգամայն ողջունելի է Ֆրանսիայի կառավարութեան նախաձեռնած օրինագիծը, որը միաձայն հաստատուեց Ազգային ժողովի կողմից՝ համապատասխան որին փոփոխութիւններ են մտցւում Ֆրանսայի Հաւասարութեան եւ քաղաքացիութեան օրէնքի մէջ՝ քրէականացնելով ցեղասպանութիւնների, մարդկութեան դէմ յանցագործութիւնների ժխտումը եւ, համապատասխանաբար, նաեւ՝ Հայոց ցեղասպանութեան ժխտումը», - յայտարարեց Հայաստանի արտաքին գործոց նախարարը:

«Յոյսով ենք, որ Ֆրանսիայի Սենատը եւս կը հաստատի այս նախագիծը, եւ դա կ՛ստանայ օրէնքի ուժ, եւ այս քայլով Ֆրանսան եւս մէկ կարեւոր, արժէքաւոր քայլ կը կատարի ցեղասպանութիւնների, մարդկութեան դէմ յանցագործութիւնների կանխարգելման վեհ գործում», - ըսաւ նախարար Նալբանդեան:

Ֆրանսայի Ազգային Ժողովը Ուրբաթ, Յուլիս 1-ին միաձայն ընդունած է օրէնք, որով կը քրէականացուի մարդկութեան դէմ յանցագործութիւններու, որոնց շարքին՝ Հայոց ցեղասպանութեան հերքումը:

Նոր օրինագիծը կը ներառէ բոլոր այն դէպքերը, որոնք ֆրանսական օրէնքը կ՛ընդունի որպէս ցեղասպանութիւն, մարդկութեան դէմ յանցագործութիւն, պատերազմական յանցագործութիւն կամ ստրկութիւն: Ընդունուած փոփոխութեամբ նման ոճիրներու հերքումը, վիճարկումը կամ նսեմացումը կը պատժուի մէկ տարուայ ազատազրկմամբ եւ 45 հազար եւրօ տուգանքով:

Այս առթիւ «Ֆրանս Փրես» գործակալութիւնը կը յայտնէ, որ օրէնքը այժմ ենթակայ է վերին պալատի՝ Ծերակոյտի քննարկման: Օրէնքի ջատագովները յոյս ունին, որ այն ուժի մէջ կը մտնէ մինչեւ տարեվերջ:

Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ իր ընտրարշաւի ժամանակ խոստացած էր նման օրէնք ընդունիլ, երբ 2012-ի Փետրուարին Սահմանադրական Խորհուրդը հակասահմանադրական հռչակեց Ֆրանսայի Խորհրդարանի երկու պալատներու հաւանութեանն արժանացած նմանատիպ օրէնքը՝ խօսքի ազատութեանը խոչընդոտելու հիմնաւորմամբ:

Այժմ Ֆրանսայի մէջ քրէական պատիժ սահմանուած է միայն Հոլոքոսթի ժխտման համար:

## Երեւանի Մէջ Հաստատուելիք Փաստաթուղթին մէջ ՆԱԹՕ-ն Կրնայ Դիտարկուել որպէս ՀԱՊԿ-ին Սպառնալիք



ՀԱՊԿ երկիրներու արտաքին գործոց նախարարներու հաւաքը Երեւանի մէջ

Յունիս 4-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) երկիրներու արտաքին գործոց նախարարներու հաւաքը, որու ընթացքին հաւանութեան արժանացած ռազմավարութեան նախագծին մէջ, ըստ ՀԱՊԿ-ի Ռուսաստանի ներկայացուցիչ Վիկտոր Վասիլեւի, պիտի «ամրագրուի, որ ՆԱԹՕ-ն սպառնալիք է»:

«Անշու՛շտ, սպառնալիքներէն մէկը, որ մենք կը դիտարկենք, ՆԱԹՕ-ի ընդլայնումն է եւ մօտենալը մեր պետութիւններու սահմաններուն: Բնականաբար, այս հարցը իր արտացոլումը կը գտնէ ռազմավարութեան մէջ», - ռուսաստանեան «Ինդերֆաքս» մամլոյ գործակալութեան հետ զրոյցի ընթացքին յայտարարած է ռուս դիւանագէտը:

Հայաստանի մայրաքաղաքին մէջ կայացած ՀԱՊԿ արտաքին գործոց նախարարներու խորհուրդի նիստէն յետոյ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան ՆԱԹՕ-ն որպէս սպառնալիք դիտարկելու մասին չարտայայտուեցաւ:

«Մեր այսօրուայ հանդիպմանը քննարկեցինք պետութիւնների ղեկավարների գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները, նրանց հաւանութեանը ներկայացուելիք փաստաթղթերի նախագծերը: Առաջին հերթին մեր ուշադրութեան կենտրոնում էր ՀԱՊԿ 2025 թուականի Հաւաքական անվտանգութեան ռազմավարութիւնը, որը ներկայացուելու է Հաւաքական անվտանգութեան խորհրդի առաջիկայ նիստի հաստատմանը», -

Շար.ը էջ 4

## Սէյրան Օհանեան Յայտնեց, որ Կորսնցուցած Դիրքերը Պաշտպանութեան Բանակի Ազդեցութեան Տակ Են

«Իւրաքանչիւր հայկական հողակտոր մեզ համար սուրբ է՝ անկախ այն հանգամանքից՝ անմշակ է, թէ մշակուած: Յուլիսի 3-ին Կիւմրի այցելութեան ընթացքին նման յայտարարութեամբ հանդէս եկած է ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան, պատասխանելով լրագրողներու այն հարցին, թէ արդեօ՞ք կորսնցուցած տարածքները իսկապէս անմշակ են, ինչպէս ՀՀԿ-ականները կը պնդեն:

«Այդ հողերը, այդ մի քանի դիրքերը գտնւում են Պաշտպանութեան Բանակի վերահսկողութեան, ազդեցութեան տակ եւ անհրաժեշտութեան դէպքում արագ նախաձեռնողական գործողութիւններով լիարժէքօրէն հետ վերադարձնելու ունակութեան շրջանակներում»- ըսած է նախարարը:

Թէ ինչո՞ւ այդ պարագային ետ չենք վերադարձներ այդ տարածքները, Սէյրան Օհանեան անպատասխան ձգեց այդ հարցը:

Ապրիլեան քառօրեայ պատերազմէն ետք, Նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց, որ հայկական կողմը կորսնցուցած է 800 հեկտար տարածք: Իսկ իշխող կուսակցութեան ներկայացուցիչները կը պնդեն, որ այդ տարածքները որեւէ նշանակութիւն չունին եւ անմշակ են:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Պետական Պարտքը Գողութեան Դիմաց

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ Արտակ Շաքոյեանն Արցախի Նախագահ Բակօ Սահակեանի հետ հանդիպմանը յայտարարել է, թէ կ՚աջակցեն, որ Արցախի գործարարները կարողանան մուտք գործել նոր շուկաներ:

Հզօր է հնչում՝ Արցախի գործարարները մուտք գործեն նոր շուկաներ: Բայց երբ ուշադրութիւն ենք դարձնում, թէ ով է դա ասում՝ տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողովի նախագահը, յայտարարութիւնը դառնում է զաւեշտալի:

ՏՄՊՊՀ յայտարարութիւններն այդպիսի բնոյթ են ստացել այն բանից յետոյ, երբ վարչապետ Յովիկ Աբրահամեանը յայտարարել է, որ Հայաստանում մենաշնորհներ չկան: Ինչպէս յայտնի է, նա այդ մասին յայտարարեց մի քանի շաբաթ ուսումնասիրութիւններից յետոյ: Մայիսի 12-ի ելոյթից յետոյ նա երեք շաբաթ ժամանակ էր տուել մենաշնորհները ուսումնասիրելու համար, իսկ երեք շաբաթ անց էլ յայտարարեց, թէ ժողովուրդը կարծում է, թէ մենաշնորհներ կան, բայց իրականում դրանք չկան:

ուղղուածութիւնն ու սկսում է զբաղուել գործարարների համար նոր շուկայ ապահովելով:

Այս իրավիճակը դրսեւորում է Հայաստանի տնտեսութեան, տնտեսական քաղաքականութեան ամբողջ անլրջութիւնը: Այդ քաղաքականութիւնն առկայ է միայն հռչակագրային յայտարարութիւնների տեսքով, իսկ իրականում տնտեսական քաղաքականութեան կառուցուածքի որեւէ օղակ զբաղուած չէ իր իրական գործառոյթով եւ անում է պարզապէս հերթապահ, ականջահաճոյ յայտարարութիւններ:

Այդ պատճառով էլ Հայաստանի տնտեսութեան վիճակը ներկայում այնպիսին է, որ հնարաւոր է գոյութիւն պահպանել առաւելապէս արտաքին պարտքի աւելացման միջոցով: Դա է Հայաստանի տնտեսական քաղաքականութեան միակ աշխատող ֆունկցիան, չաղաւաղուած կամ չնենգափոխուած միակ գործառոյթը:

Բանն այն է, որ արտաքին պարտքը Հայաստանի համար դարձել է փոխհատուցում՝ Հայաստանից գողացուողի, Հայաստանի տնտեսական հնարաւորութիւնների եւ ռեսուրսների մսխման «փոխհատուցումը»: Քանի որ Հայաստանի տնտեսութիւնը դրուել

**Ապահովել տնտեսական իրական ազատութիւն, բացել հանրութեան ստեղծագործական պոտենցիալի իրացման ճանապարհները եւ ապահովել դրանցում խաղի օրինական կանոնների կիրառումը, եւ հասարակութիւնն ինքը ոչ միայն կը լցնի Հայաստանն էլ, Արցախն էլ, այլ կը գտնի նաեւ նոր շուկաներ**

Ընդ որում, պարզուեց, որ ոչ միայն մենաշնորհներ չկան, այլ Հայաստանում նաեւ տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողով չկայ: Որովհետեւ, եթէ այդպիսի յանձնաժողով կայ, ապա Յովիկ Աբրահամեանը Մայիսի 12-ի իր «պատմական» ելոյթում եւ դրան յաջորդած զարգացումներում գոնէ մի փոքր պէտք է յղում անէր այդ յանձնաժողովին, որովհետեւ ի վերջոյ ենթադրւում է, որ ՏՄՊՊՀ-ն պէտք է լաւագոյնս պատկերացնէր՝ մենաշնորհ կայ, թէ չկայ: Բայց Յովիկ Աբրահամեանը դրսեւորեց այնպիսի պահուածք, որ պարզուեց՝ Հայաստանում ոչ միայն մենաշնորհ չկայ, այլ նաեւ տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողով:

Հիմա այդ յանձնաժողովի նախագահն այցելել է Արցախ ու խօսում է այն մասին, թէ ամէն ինչ կ՚անեն Արցախի գործարարների համար նոր շուկայ գտնելու համար:

Օրինակ, ի՞նչ է անելու յանձնաժողովի նախագահ Արտակ Շաքոյեանը: Այդ յանձնաժողովը նոր շուկայ գտնելու համա՞ր է, թէ Հայաստանում տնտեսութեան մրցակցայնութիւնը պաշտպանելու, մրցակցութեան սկզբունքի խախտումներին հետեւելու եւ արձագանքելու: Թէ՞ քանի որ Յովիկ Աբրահամեանը յայտարարել է, որ մենաշնորհ չկայ, ՏՄՊՊՀ-ն այլեւս փոխում է պրոֆիլային

է ընդամէնը մի քանի տասնեակ անձանց հարստացման ռեժիմի վրայ, քանի որ տնտեսական քաղաքականութիւնն իրականացւում է այդ ելակէտով ու առաջնահերթութեամբ, եւ քանի որ այդ մարդիկ արդէն դատարկում են Հայաստանի տնտեսութեան հիմքը՝ քանի որ վրայինը խժռել են ամբողջութեամբ, մեծանում է դատարկուածը ինչ որ բանով լցնելու անհրաժեշտութիւնը: Իսկ դա հնարաւոր է լցնել արտաքին պարտքով:

Կայ իհարկէ մէկ այլ տարբերակ՝ դադարեցնել գողութեան եւ մսխման ռեժիմը, ապահովել տնտեսական իրական ազատութիւն, բացել հանրութեան ստեղծագործական պոտենցիալի իրացման ճանապարհները եւ ապահովել դրանցում խաղի օրինական կանոնների կիրառումը, եւ հասարակութիւնն ինքը ոչ միայն կը լցնի Հայաստանն էլ, Արցախն էլ, այլ կը գտնի նաեւ նոր շուկաներ:

Բայց դա նշանակում է, որ տնտեսական քաղաքականութեան կառոյցները պէտք է դադարեն սպասարկել մի քանի տասնեակ անձանց շահն ու ծառայեն հանրային, պետական շահին: Բայց այդ անձինք հանրային եւ պետական շահի համար չէ, որ քառորդ դար ուզուրպացրել են Հայաստանի իշխանութեան օղակները եւ դրանք վերածել հռչակագրային ցուցանակների:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# «Քոստ Երկիրն» Ու Գագիկ Խաչատրեանները



ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Hetq.am պարբերականը ուշագրաւ ու աղմկահարոյց յօդուած է հրապարակել Հայաստանի մեծահարուստներից մէկի կարողութիւնների մասին: Ըստ նշեալ հրապարակման՝ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրեանի որդիներ Գուրգէնը (ծն. 1983 թ.) եւ Արտիոմը (ծն. 1986 թ.), 2010-ին շքեղ առանձնատուն են գնել Լոս Անճելոսի Վեսթվուդ (Westwood) թանկարժէք թաղամասում: Ըստ hetq.am-ի, հսկայական բիզնեսների ու միլիոնաւոր տոլարների հասնող ունեցուածքի հետեւանքով մամուլի կողմից «սուպերնախարարի» անուն ստացած Գագիկ Խաչատրեանի հետ բազմաթիւ ընկերութիւններ են առնչւում, որոնք, սակայն, գրանցուած են նրա հարազատների անուններով՝ «Եուքոմ», «Մեգաֆուդ», «Ապեյրոն», «Մեգամոթորս», «Մեգասպորտ», «Խրոնոգրաֆ», «Գալաքսի Կոնցեռն», «Զիմեգ» եւ այլն: Սրանցից մի քանիսի մէջ մասնակցութիւն ունեն նաեւ Գուրգէնն ու Արտիոմը: Վերջիններս իրենց կանանց հետ գրանցուած են Տէրեան 66 հասցէում՝ տարբեր բնակարաններում: Տէրեան 66-ը մետրոյի «Երիտասարդական» կայարանի հարեւանութեամբ գտնուող «HSBC» բանկի բարձրայարկն է: Սակայն Լոս Անճելոսի 355 South Mapleton Drive հասցէի համեմատութեամբ Տէրեանն 66-ը, hetq.am-ի բնորոշմամբ՝ աղքատանոց է:

Գագիկ Խաչատրեանի գործունէութեան ու կարողութիւնների մասին առաջին անգամ չէն մամուլում տեղեկութիւններ հրապարակւում: Հայաստանում վաղուց էին քննարկւում տեղեկութիւններն այն մասին, որ նրա առանձնատանը ֆիլիպինուհիներ են աշխատում, որոնք հայաստանցիների հետ շփումների մէջ չեն մտնում, հետեւաբար այդ Խաչատրեանների ընտանիքի ցոփ ու շուայտ կեանքի մասին տեղեկութիւններն առանձնապէս դուրս չեն գալիս նրանց բնակարանի պատերից:

Շրջանառւում են աւելի թարմ տեղեկութիւններ: Մի որոշ ժամանակ նա Խաչատրեանները Սպանիայում են որոշել բնակարան ձեռք բերել, եւ այն բանից յետոյ, երբ միջնորդները 3 միլիոն եւրոյանոց առանձնատուն են գտել, պարզուել է, Խաչատրեանների ինքնասիրութիւնը վիրաւորել են... Թէ՝ «3 միլիոն եւրոյանոց առանձնատուն ի՞նչ պէտք է լինի, կարգին տուն գտէք...»:

Ժամանակի, երբ լարուած են եղել «Գրանդ Տոբակօ» ընկերութեան նախագահ, Հրանտ Վարդանեանի եւ Գագիկ Խաչատրեանի յարաբերութիւնները, վերջինս մտերիմների միջավայրում պատմել է, որ ուղղաթիռներ է բերել Հայաստան, որոնց օգնութեամբ նկարահանել է Գագիկ Խաչատրեանի հայաստանեան ունեցուածքը:

Հիմա Գագիկ Խաչատրեանի կարողութիւնների մասին հրապարակումն, իհարկէ, մի կողմից դրական է, թէեւ մեծ հաշուով, նորութիւն չի հայաստանցիների համար: Բայց ո՞րն է այդ իրականութեան սփռման նպատակը... Գագիկ Խաչատրեանից ունեցուածքը խլելն ու ի շահ պետութեան, բանակի, հասարակութեան օգտագործե՞լը:

Հագիւ թէ: Մեր օրերում կարգազանց պաշտօնեաները զրկւում են պաշտօններից, բայց կատարած չարաշահումների համար ոչ միայն չեն պատժւում, այլեւ քիչ անց նոյն մարդիկ յայտնւում են այլ պաշտօններում:

Հետեւաբար, շատ հնարաւոր է, որ Գագիկ Խաչատրեանի ունեցուածքը, պարզապէս, ինչ-որ մէկին՝ իշխանութեան վերեւներում հանգիստ չի տալիս, այն վերաբաշ-

Շար.ը էջ 18

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ըստ Հելսինքեան կոմիտէի Զեկոյցին. «Հաւաքների Ժամանակ Ոստիկանների Թիւն Անհամաչափ Մեծ է Եղել



*Հայաստանի ոստիկանական խիտ շարքերը ցուցարարներու հետ դէմ-դիմաց*

*Անցած մէկ տարուայ ընթացքում խաղաղ հաւաքների անցկացման վայրերում ծառայութիւն իրականացնող ոստիկանների թիւն անհամաչափ մեծ է եղել: Այս մասին նշուել է Հայաստանի Հելսինքեան կոմիտէն պատրաստած զեկոյցում:*

*Ըստ այդմ, դիտարկելով 2015 թուականի Յունիսի 30-ից 2016-ի Յունիսի 30-ն ընկած ժամանակահատուածում Երեւանում, Վանաձորում եւ Գիւմրիում կազմակերպուած 126 հաւաքները՝ կազմակերպութիւնը հաւաքների վայրերում ներկայ ոստիկանների անհամաչափ մեծաթիւ լինելը «Վարչարարութեան հիմունքների եւ վարչական վարոյթի մասին» ՀՀ օրէնքի սկզբունքների խախտում է որակել:*

*Ըստ զեկոյցի՝ նշուած ժամանակահատուածում շարունակուել են խաղաղ հաւաքների մասնակիցների անհարկի ձերբակալութիւնները, որոնց նպատակը եղել է անձանց՝ տուեալ հաւաքներին մասնակցութիւնը խափանելուն:*

*«2015 թուականի Յունիսի 23-ին Բաղրամեան պողոտայում «Էլեկտրիկ Երեւան» հաւաքի ընթացքում ոստիկանութեան ոչ իրաւաչափ գործողութիւնների առիթով յարուցուած քրէական գործը դեռ գտնւում է նախաքննութեան փուլում:*

*Որեւէ ոստիկան պատասխանատուութեան չի ենթարկուել նաեւ 2015 թ. Յունուարի 15-ին Ազատութեան հրապարակում՝ ի յիշատակ Գիւմրիում սպաննուած Աւետիսեանների ընտանիքի կազմակերպուած մոմավառութիւն-հաւաքը դադարեցնելու եւ մասնակիցներին անհիմն բերման ենթարկելու համար: Համաձայն ուսումնասիրութեան՝ խաղաղ հաւաքներին մասնակցում են նաեւ քաղաքացիական հագուստով ոստիկաններ, որոնք, ի տարբերութիւն նախորդ տարիների, դիտարկուող այս ժամանակահատուածում բռնութիւն չեն կիրառել հաւաքի մասնակիցների նկատմամբ»,-ասուած է զեկոյցում:*

*Հելսինքեան կոմիտէն ոստիկանութեանը յորդորում է ձեռնպահ մնալ անհամաչափ ուժի եւ բռնութեան կիրառումից, անհարկի եւ չարդարացուած ձերբակալութիւններից:*

# Խուզարկութիւններ «Նոր Հայաստան»-ի Տասնեակ Անդամների Ու Նրանց Հարազատների Տներում

*Սա քաղաքական հետապնդում է «Նոր Հայաստան» շարժման անդամների նկատմամբ, ասաց Վարուժան Աւետիսեանը:*

*Ժիրայր Սեֆիլեանի դէմ յարուցուած քրէական գործի շրջանակներում մի շարք խուզարկութիւններ են կատարուել «Նոր Հայաստան» ընդդիմադիր շարժման տասնեակ անդամների ու նրանց հարազատների տներում:*

*Ինչպէս «Ազատութեան»-ը յայտնեց շարժման անդամ Վարուժան Աւետիսեանը, իրաւապահները ձերբակալել են ազատամարտիկ Պաւել Մանուկեանի եղբօրը՝ Թաթուլ Մանուկեանին, որի բնակարանում յայտնաբերուել են փամփուշտներ:*

*Նա փոխանցեց, որ բացի Թաթուլ Մանուկեանի բնակարանից, միւսների բնակարաններում խուզարկութեան արդիւնքում ապօրինի իրեր չեն յայտնաբերուել:*

*Պաւել Մանուկեանն ասաց, որ վաղ առաւօտեան, իրաւապահները, մուտք գործելով իր բնակարան ու մօտ երկու ժամ խուզարկութիւն անցկացնելով, ձեռնունայն հեռացել են՝ իրեն որպէս վկայ հրաւիրելով հարցաքննութեան Սեֆիլեանի դէմ յարուցուած քրէական գործի շրջանակներում:*

*«Յետոյ հրաւիրեցին Քննչական կոմիտէ, փորձեցին կապել Ժիրայր Սեֆիլեանի եւ այդ ութ հոգու հետ արհեստական կապ փորձեցին ստեղծել, բայց բացի Ժիրայր Սեֆիլեանից եւ Սասուն Կիրակոսեանից, ես ոչ մէկին չեմ ճանաչում: Կարող է դէմքով տեսնեմ ու ասեմ, որ ինչ-որ տեղ տեսել եմ», - ասաց Պաւել Մանուկեանը:*

*Ազատամարտիկը չեշտում է՝ եղբայրը կապ չունի «Նոր Հայաստան» շարժման գործունէութեան հետ:*

www.massispost.com

# Նորաստեղծ ԳԱԼԱ-ի Նպատակներից է Լեգիտիմ Իշխանութեան Ձեւաւորումը

*Գիւմրիում տեղի է ունեցել ԳԱԼԱ կուսակցութեան հիմնադիր համագումարը:*

*«Գաղափարակից լիբերալների ալեանս» կամ ԳԱԼԱ կուսակցութեան հիմնադիր համագումարի ժամանակ նախաձեռնող խմբի անդամները բացատրեցին, թէ ինչու է ԳԱԼԱ հեռուստաընկերութեան հիմնադիրը, նաեւ մի քանի լրագրողներ, մտնում քաղաքականութիւն:*

*«ԳԱԼԱ կուսակցութեան առաջնահերթութիւններն են՝ ժողովրդավարական, ազատ եւ արդար ընտրութիւնների անցկացումը, դրանց արդիւնքում լեգիտիմ եւ պատասխանատու իշխանութեան ձեւաւորումը, մարդու եւ քաղաքացու ազատ, անվտանգ եւ ապահով ապրելու, արարելու հնարաւորութիւնների ստեղծումը, մարդու արժանապատիւ կեանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը»,- ասաց նախաձեռնողներից մէկը:*

*Կուսակցութիւնը մասնակցելու է Գիւմրիում կայանալիք քաղաքապետի ընտրութիւններին: Այժմ քաղաքական ուժերի հետ հնարաւոր համախմբման հարցերով բանակցութիւններ է սկսել: Աշնանը Գիւմրիում եւ Վանաձորում կայանալիք ՏԻՄ ընտրութիւնները, յիշեցնենք, անցկացուելու են համամասնական ընտրակարգով:*

*ԳԱԼԱ-ի հիմնադիր համագումարում կուսակցութեան վարչութեան նախագահ ընտրուեց Վահան Խաչատրեանը՝ նոյնանուն հեռուստաընկերութեան հիմնադիրը: Արդէն յայտնի՞ է, թէ ով է գլխաւորելու նորաստեղծ կուսակցութեան ընտրական ցուցակը: Այս հարցին ի պատասխան, Խաչատրեանը նշեց, թէ գոնէ իրեն քաղաքապետի աթոռին չի տեսնում: «Հիմա ընթանում են բանակցութիւններ, քանի որ դեռ կոալիցիա չի ստեղծուել, հիմա կոռեկտ չէ ինչ-որ մէկի անունը տալ: Հենց կ'ունենանք կոալիցիա, կը հասկանանք, թէ ով է մեզ միանում, դրանից յետոյ նոր կ'որոշենք թիւ մէկի խնդիրը»,- ասաց Խաչատրեանը: Իսկ եթէ չյաջողուի՞ համախմբուել: Այս հարցին էլ պատասխանելով՝ Վահան Խաչատրեանը նշեց, թէ իշխանութիւնների ցանկութիւնն էլ հենց դա է՝ «Մենակ կը կրենք, ինչու ոչ, վստահ եմ»:*

*ԳԱԼԱ-ն խորհրդարանական ընտրութիւններին եւս մասնակցելու է: Առաջիկայում կուսակցութիւնը կ'ընդլայնի գործունէութիւնը՝ այլ բնակավայրերում եւս հիմնելով գրասենեակներ: Համագումարի ընթացքում խօսուեց իշխանափոխութեան, լեգիտիմ իշխանութիւն ձեւաւորելու, նաեւ Գիւմրիի՝ «ընդդիմադիր քաղաք լինելու ֆենոմենի» մասին. իշխող ուժը վերջին մի քանի համապետական ընտրութիւններում այնտեղ պարտութիւն է կրել: Արդեօ՞ք ԳԱԼԱ կուսակցութիւնը իշխանափոխութեան գործընթաց է սկսում «ընդդիմադիր» քաղաքից: «Էկեք էդպէս վերամբարձ բաներ չասենք, ընդհանրապէս շատ չեմ խօսում, գործ եմ անում: Գլուխներս կախ, կամաց-կամաց անում ենք մեր գործը»,- հարցին այսպէս պատասխանեց Վահան Խաչատրեանը:*

*Գիւմրիի քաղաքապետի ընտրութիւններին մասնակցելու մտադրութեան մասին արդէն յայտարարել են նաեւ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, «Քաղաքացիական պայմանագիր»-ը, «Ժառանգութիւն-ը», «Հայկական վերածնունդ»-ը եւ «Լուսաւոր Հայաստան»-ը:*

# «Ունենք Շատ Լաւ Սահմանադրութիւն, Բայց Երջանիկ Հարուստներ Ու Դժբախտ Աղքատներ».- Սահմանագրագէտ

*Մենք ունենք շատ լաւ, ժողովրդավարական սահմանադրութիւն, բայց ունենք երջանիկ հարուստներ ու դժբախտ աղքատներ: Լրագրողների հետ հանդիպմանը, Յուլիսի 5-ին՝ սահմանադրութեան օրը, նման կարծիք յայտնեց սահմանադրագէտ Վարդան Այվազեանը:*

*«Սահմանադրութեան երրորդ յօդուածն ասում է, որ մարդ բարձրագոյն արժէք է համարւում, բայց սոցիալական անմխիթար վիճակում գտնուող հասարակութեան համար այս յօդուածը մշտապէս ոտնահարւում է:*

*Եթէ մարդ բարձրագոյն արժէք է համարւում, ապա նա արժանավայել պէտք է ապրի պետութեան մէջ»,- ասաց նա՝ նշելով, որ եթէ հասարակութիւնը բարեկեցիկ չէ, դրանից է բխում մնացած իրաւունքների իրականացումը:*

*Սահմանադրագէտի խօսքով՝ լաւ կը լինէր, որ մեր Սահմանադրութիւնն էլ շուէյցարական Սահմանադրութեան պէս մի կէտ ունենար, որում ասւում է, որ եթէ ազգը ուզում է լինել հզօր, առաջին հերթին պէտք է ապահովի թոյլերի բարեկեցութիւնը:*

*«Օրինակ՝ մարդն ունի բարձրագոյն կրթութեան իրաւունք, բայց չունի ուսման վարձի գումարը, այդ իրաւունքը ոչ մատչելի է դառնում: Առաջին հայեացքից՝ ոչ Սահմանադրութիւնն է մեղաւոր, ոչ էլ պետութիւնը: Բայց եթէ Սահմանադրութիւնը դնէր այս խնդիրը գաղափարական առումով, այս հիմքի վրայ տնտեսական համակարգն էլ այլ կը լինէր, սրանից բխող երեւոյթներն էլ»,- ասաց Այվազեանը՝ յաւելելով, որ եթէ հարստութեան կուտակման մշտադիտարկման կառուցակարգեր չկան Սահմանադրութեամբ, ապա այդ տնտեսութիւնը չի կարող ծառայել հասարակութեանը:*

*Սահմանադրագէտի խօսքով՝ մեր ունեցած Սահմանադրութիւնը նախորդներից որակական առումներով բարձր է, սակայն դրա՝ կեանքի կոչելու համար իրաւամտածողութեան պետական մակարդակ է անհրաժեշտ:*

*«Պետական այրերը բոլորը սահմանադրութեան եւ արժէքների վերաբերեալ պէտք է ունենան օբիեկտիւ ընկալումներ, ոչ թէ սուբիեկտիւ, որ իւրաքանչիւր պաշտօնեայ այն մեկնաբանի այնպէս, ինչպէս ինքն է ուզում: Այս վարքագծով դժուար թէ ունենանք դրական անդրադարձ, քանի որ այս քաղաքական անցուդարձը կրկէս է յիշեցնում, խաթարում է հասարակութեան իրաւամտածողութիւնը»,- ասաց նա:*

## Լեռնային Ղարաբաղում Ռազմական Բախումների Վերսկսումը Շատ Աւելի Կործանարար Կարող Է Լինել

Ղարաբաղում ռազմական բախումների վերսկսումն ամենայն հաւանականութեամբ շատ աւելի կործանարար կը լինի եւ աւելի շատ զոհեր կը լինեն: Նման կարծիք են յայտնել Միջազգային ճգնաժամային խմբի (International Crisis Group) փորձագէտները իրենց կայքում հրապարակուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ զեկոյցում:

Առնուազն 2011 թուականից ի վեր Լեռնային Ղարաբաղում շփման գծում եւ հայ-ատրպէյճանական սահմանին ռազմական էսկալացիան ցոյց էր տալիս, որ պէտք չէր զարմանալ, երբ տեղի ունեցան ապրիլեան խոշոր բախումները: Այդ բախումների ընթացքում կիրառուած զէնքի եւ գրանցուած զոհերի փաստը եւ այն ակնյայտ սպառնալիքը, որ աւելի ուժեղ սրացումը կարող է ներքաշել հարեւան հզօր երկրներին, կենտրոնացրել են միջազգային կարեւոր դերակատարների այդքան անհրաժեշտ քաղաքական ուշադրութիւնը եւ հնարաւորութիւն են ստեղծել յաճախ սխալմամբ սառած անուանուող հակամարտութեան խաղաղ կարգաւորում գտնելու համար:

Վերսկսուած ռազմական էսկալացիան հաւանաբար շատ աւելի կործանարար կը լինի, քան ապրիլի բռնկումը, նշում են փորձագէտները: Լուրջ վտանգ կայ, որ կ՚օգտագործուեն հեռահար երկիր-երկիր հրթիռներ եւ զոհերի թիւը, յատկապէս քաղաքացիական բնակչութեան շրջանում, շատ աւելի բարձր կը լինի՝ հողային առաւելութիւն ձեռք բերելու վճռական փորձի պատճառով:

Ապրիլեան բախումներից յետոյ Հայաստանի եւ Ատրպէյճանի հասարակութիւններն աւելի պատրաստ են ռազմական լուծման, քան 25 տարուայ ընթացքում որեւիցէ այլ ժամանակ:

ICG-ի փորձագէտները նշում են, որ տարածաշրջանի կոնտեքստը զգալիօրէն փոփոխուել է անցած տարուայ ընթացքում եւ այդ փոփոխութիւնները մեծացնում են բախումների վերսկսման դէպքում լայնամասշտաբ բացասական հետեւանքների հնարաւորութիւնը:

Զեկոյցում նշւում է, որ միջազգային խաղացողների շահերը համընկնում են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում առաջընթաց խթանելու համար, բայց Մոսկուան, որն իրեն դիրքաւորում է որպէս կարեւոր միջնորդ եւ անվտանգութեան երաշխաւորող, նաեւ փորձում է դրա միջոցով ուժեղացնել իր ռազմավարական դիրքը իր համար հետաքրքրութիւն ներկայացնող տարածաշրջանում՝ այդ թւում նաեւ Բաքուի հետ աւելի սերտ յարաբերութիւններ հաստատելով: Աւելին, մինչդեռ Մոսկուան քաղաքական կամք եւ հեղինակութիւն ունի նպաստելու կարգաւորման գործընթացին, նրա տարածաշրջանային դերը պառակտիչ է եղել, այդ պատճառով նրան հարկաւոր են միւս համանախագահները՝ գործընթացն իսկապէս վստահելի դարձնելու համար:

Մայիսի 16-ին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների միջեւ կայացած բանակցութիւնները հնարաւորութիւն կարող էին լինել խաղաղութեան գործընթացը վերսկսելու համար: Այնուամենայնիւ, յաջորդիւ Սանկտ Պետերբուրգում Յունիսի 20-ին տեղի ունեցած բանակցութիւններից յետոյ հրապարակուած յայտարարութիւնը ցոյց է տալիս, որ գործընթացին հաղորդուած թափն արդէն, հաւանաբար, թուլանում է: Փորձագէտները նշում են, որ Մինսկի խմբի բոլոր համանախագահները պէտք է ներգրաւուեն միջնորդութեան ջանքերում բարձրաստիճան քաղաքական մակարդակով դրանց անհրաժեշտ կշիռը եւ հրատապութեան զգացումը հաղորդելու համար:

Ըստ կազմակերպութեան փորձագէտների՝ ԼՂ հակամարտութեան համապարփակ կարգաւորման ուղղութեամբ առաջընթացը հնարաւոր դարձնելու համար հարկաւոր է նաեւ զուգահեռ քայլեր ձեռնարկել վստահութեան եւ անվտանգութեան ապահովման ուղղութեամբ, ներառեալ՝ ԵԱՀԿ հետաքննական մեխանիզմների ստեղծումը: Փորձագէտները նշում են նաեւ, որ հարկաւոր է նախնական աշխատանքներ իրականացնել ապագայում խաղաղապահ ուժերի տեղակայման ուղղութեամբ, իսկ ԵՄ-ն պէտք է շարունակի իր ուժեղ քաղաքական աջակցութիւնը տրամադրել Մինսկի խմբին, ինչպէս նաեւ պլանաւորի հակամարտութեանը յաջորդող փուլում փորձագիտական եւ ֆինանսական աջակցութիւնը: Փորձագէտները նաեւ նշում են, որ ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն պէտք է յորդորեն Թուրքիային իր յայտարարութիւններում եւ գործողութիւններում աջակցել խաղաղ կարգաւորման գործընթացում առաջընթաց գրանցելու համար Մինսկի խմբի համանախագահների իրականացրած ջանքերին:

«Միջազգային հանրութիւնը պնդում է, որ Թուրքիան պէտք է քայլեր ձեռնարկի իր յարաբերութիւնները Հայաստանի հետ կարգաւորելու, այդ թւում սահմանները բացելու ուղղութեամբ առանց նախապայմանների: Բայց, քանի որ Թուրքիան դա կապել է կարգաւորման բանակցութիւններում առաջընթացի հետ, Անկարան պէտք է առնուազն յստակեցնի, թէ ինչ առաջընթաց է ակնկալում եւ դրան համապատասխան պարտաւորութիւններ ստանձնի»,- նշուած է զեկոյցում:

Միջազգային ճգնաժամային խմբի փորձագէտներն, այնուամենայնիւ, նշում են, որ այս բոլոր քայլերը դեռեւս չեն կարող նշանակել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերջնական լուծում: Բայց եթէ լինեն արագ եւ համակարգուած գործողութիւններ Ատրպէյճանին տարածքների վերադարձի, անվտանգութեան եւ Լեռնային Ղարաբաղի միջանկեալ կարգավիճակի երաշխաւորման վստահելի մեխանիզմների ներդրման ուղղութեամբ, հնարաւոր է, որ խաղաղութեան գործընթացը դուրս գա ներկայիս փակուղուց:

## Սերժ Սարգսեանն ԱՄՆ Անկախութեան Օրուայ Առթիւ Այցելել Է Հայաստանում ԱՄՆ Դեսպանի Կեցավայր



Սերժ Սարգսեան Ամերիկայի Անկախութեան օրուայ առթիւ, կ՚այցելէ ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսի կեցավայր

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը, Ամերիկայի Միացեալ Նահանգների Անկախութեան օրուայ առթիւ, այցելել է Հայաստանում ԱՄՆ դեսպանի կեցավայր:

Սերժ Սարգսեանը տօնի կապակցութեամբ շնորհաւորել է դեսպան Ռիչարդ Միլսին եւ ի դէմս նրա՝ դեսպանատան աշխատակիցներին ու Միացեալ Նահանգների ամբողջ ժողովրդին, յաջողութիւններ մաղթել հայ-ամերիկեան յարաբերութիւնների շարունակական զարգացման ու ամրապնդման գործում:

Հանրապետութեան նախագահը բարձր է գնահատել Միացեալ Նահանգների ներդրումը Հայաստանի անկախացումից ի վեր երկրի տնտեսութեան զարգացման, ժողովրդավարութեան ամրապնդման, քաղաքացիական հասարակութեան կայացման գործում եւ ընդգծել, թէ լիայոյս է՝ ԱՄՆ նախագահական ընտրութիւններից յետոյ էլ երկկողմ միջպետական յարաբերութիւնները կը շարունակեն դինամիկ զարգանալ:

Դեսպան Ռիչարդ Միլսը շնորհակալութիւն է յայտնել ՀՀ նախագահին այցելութեան եւ շնորհաւորանքի համար: Նա նշել է, որ անցած քսանհինգ տարիներին ուշադրութեամբ հետեւել է Հայաստանի զարգացումներին եւ համակարծիք է նախագահ Սարգսեանի հետ՝ այդ ժամանակաշրջանում Հայաստանի արձանագրած ձեռքբերումների հարցում:

ԱՄՆ դեսպանն ընդգծել է, որ Հայաստանի քաղաքացիները, իրաւամբ, կարող են հպարտանալ անցած քառորդ դարի ընթացքում թէ՛ տնտեսական, թէ՛ սոցիալական, թէ՛ քաղաքական ոլորտներում Հայաստանում արձանագրուած առաջընթացով, եւ ուրախ է, որ այդ ամէնում ինչ-որ չափով մասնակցութիւն են ունեցել ԱՄՆ կառավարութիւնն ու ժողովուրդը:

## Հայաստանում Ռուս Օդաչուները Սկսել Են Տակտիկական Վարժանքների Պատրաստութիւնը

Հայաստանում տեղակայուած՝ Ռուսաստանի Հարաւային ռազմական օկրուգի էրեբունիի աւիաբազայի կործանիչների եւ բանակային աւիացիայի ռուս օդաչուները սկսել են լայնածաւալ տակտիկական վարժանքների ինտենսիւ գործնական նախապատրաստութիւնը: Վարժանքներն ընթանալու են Յուլիսի կէսին «Կամխուդ» եւ «Ալագյազ» հրաձգարաններում:



Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է Հարաւային ռազմական օկրուգի մամուլի ծառայութիւնից, ՄիԳ-29 կործանիչների, հարուածային Մի-24Պ ուղղաթիռների, եւ Մի-8ՄՏ գրոհիչ ուղղաթիռների օդաչուները ուսումնամարզական թռիչքներ են իրականացնում նուազագոյն եւ առաւելագոյն թոյլատրելի բարձրութիւնների վրայ, մշակում են օդային մարտի եւ ցամաքային օբիեկտները գրոհելու առաջադրանքները: Թռիչքներն իրականացւում են օդակներով, զոյգերով եւ առանձին գիշերային եւ ցերեկային ժամերին բարձր լեռնային «էքստրեմալ» պայմաններում:

## Երեւանի Մէջ Հաստատուելիք

Տարունակուած էջ 1-էն

ըստ Նալբանդեան:

Յառաջիկայ Հոկտեմբերին Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ ՀԱՊԿ երկիրներու նախագահներ ու հանդիպումը եւ կը սպասուի, որ այդ գագաթնաժողովին այդ ռազմավարութիւնը վերջնականապէս կը հաստատուի:

Հայաստան 1992-էն ի վեր կը համագործակցի ՆԱԹՕ-ի հետ՝ միանալով Հիւսիսատլանտեան Համագործակցութեան Խորհուրդին, իսկ 1994-էն ասդին Երեւան ներգրաւուած է դաշինքի «Գործընկերութիւն Յանուն Խաղաղութեան» ծրագրին մէջ:

# Լոս Անջելեսում Հայաստանն էր Պակասում
# Նելլին Ու Ստեփանը Պատմում Են Երեւան Տեղափոխուելու Մասին

«Մամ ջան, մի՛ լացի: Ես գնում եմ իմ սրտի երկիրն ապրելու. ես գնում եմ ինձ թթուածին տուող երկիրն ապրելու»: Նելլի Մարտիրոսեանի ֆեյսբուքեան գրառումն է: Նա Յունիսի 27-ից ամուսնու եւ 2-ամեայ դստեր հետ մշտական բնակութիւն է հաստատել Հայաստանում:

1999թ. Նելլին ու Ստեփանն իրենց ընտանիքներով տեղափոխւում են ԱՄՆ-ում ապրելու: Մի քանի բարձրագոյն կրթութիւն ստացած Նելլին ու Ստեփանն այս տարիների ընթացքում ամէն օր մտածում էին Հայաստան տեղափոխուելու մասին: Ամուսնանալուց յետոյ ամուսիններով որոշում են կայացնում մշտապէս տեղափոխուել հայրենիք:

«Հայաստան տեղափոխուելու որոշումը ես կայացրել էի 17 տարի առաջ, իհարկէ, այդ ժամանակ չգիտէի, որ բալիկիս հետ կը վերադառնամ: Երբ ոտք եմ դրել Միացեալ Նահանգներ, այդ օրուանից երազել եմ Հայաստան վերադառնալու մասին, ի սրտէ եմ երազել, ամէն օր եմ երազել եւ տարիների ընթացքում երազը դարձել է ծրագիր: Ոչ թէ սրտնեղել եմ, այլ իմ առաջ նպատակներ եմ դրել, որ հասնեմ սրան, նրան, որ լինել աւելի ուժեղ մարդ, աւելի շատ կարողութիւններ ու փորձ ունենամ, որ աւելի լաւ ծառայեմ իմ ժողովրդին»,- ասում է 34-ամեայ Նելլին:

ԱՄՆ-ում Նելլին ու Ստեփանն ունէին բարձր վարձատրուող աշխատանք, լաւ կարիերա ապահովելու հնարաւորութիւն: Սակայն ինչպէս իրենք են շեշտում, Լոս Անջելեսում իրենց Հայաստանն էր պակասում: Երեւանում ամուսինները դուրս են գալիս փողոց եւ իրենց տանն են զգում, այստեղ ոչինչ ու ոչ ոք օտար չէ:



Հայրենիք տեղափոխուած Սարգսեանների ընտանիքը

«Ստեփանը մի լաւ խօսք ունի. տանդ տանիքը որ ծակւում է, չես ասում՝ գնամ հարեւանի տանն ապրեմ, այնտեղ ապահով է, այլ մտածում ես տանիքդ վերանորոգելու մասին: Այսինքն մենք մեր տանն ենք, սա մերն է: Վերջապէս սա այն հողն է, որի համար դարեր շարունակ մարդիկ պայքարել են: Վառ ապացոյցն էլ քառօրեայ պատերազմն է, երբ մեր զինուորները զոհուեցին, որ այս հողը մնայ իր տեղում»,- ասում է Նելլին:

Թէ ինչու են Միացեալ Նահանգներում ապահով կեանքը թողել եւ վերադարձել Հայաստան, Ստեփան Սարգսեանը մի պարզ բացատրութիւն ունի. պատմական ցանկացած ժամանակաշրջանում տարբեր երկրներ աւելի լաւ կեանք ու պայմաններ են առաջարկում, քան Հայաստանինն է, սակայն եթէ սրանով առաջնորդուէինք, ապա մեր նախնիներն էլ կը հեռանային՝ չպայքարելով իրենց անկախութեան համար:

«ԱՄՆ-ի առաջարկած պայմանները բացարձակ կարեւոր չեն: Իհարկէ, ես բիզնեսով էի զբաղւում, Նելլին հետազօտութիւններով էր զբաղւում: Հիմա էլ մեր գործերն այնտեղ շարունակւում են, որը թոյլ է տալիս մեր այստեղի գործունէութիւնը շարունակելու է: Թէ ինչ կ՛անենք հետագայում, ժամանակը ցոյց կը տայ: Այս պահին «Հայրենասէր կազմակերպութիւնն» ունենք, որն Արցախում բարեգործական ծրագրեր է իրականացնում. Դպրոցներ ենք կառուցում, մանկապարտէզներ եւ փորձում են զարգացնել վերաբնակեցումն Արցախում»,- նշում է Ստեփանը:

Ընտանիքը Երեւանում վարձով է ապրում: Բնակարան չունեցող ընտանիքին այս հարցն այս պահին չի հետաքրքրում. կարեւորը տեղափոխուել են Հայաստանում ապրելու: Նելլիի եւ Ստեփանի աղջնակը՝ 2-ամեայ Շուշին, յարմարւում է նոր բնակարանին: Իր հետ ԱՄՆ-ից Հայաստան է բերել իր բոլոր խաղալիքները, միայն ժամային գօտին է դժուար համակերպւում:

«Հայաստան գալիս մեր ծնողներին ասել ենք, որ դուք ժամանակին ձեր որոշումը կայացրել էք, հիմա էլ մենք մեր որոշումն ենք կայացնում. մեր ընտանիքն ենք կազմել եւ կարծում ենք՝ մեր ընտանիքը երջանիկ լինելու համար պէտք է ապրի Հայաստանում: Այս որոշումը կայացրել ենք նաեւ Շուշիի համար»,- եզրափակում է Ստեփանը:

Ամուսինները յոյս ունեն, որ Հայաստանում գտնուելով կը կարողանան առաւել մեծ օգնութիւն ցուցաբերել արցախցիներին:

# Կլէնտէյլ Էտվէնթիսթ Հիւանդանոցն ու Հայաստան Հիմնադրամը հրատապօրէն անհրաժեշտ բժշկական պիտոյքներ կ»ուղարկեն Հայաստան եւ Արցախ




Արձագանգելով Արցախեան քառօրեայ պատերազմէն վնասուած հայ բնակչութեան բժշկական եւ մարդասիրական հրատապ կարիքներուն, վերջերս Կլէնտէյլ Էտվէնթիսթ Բժշկական Կեդրոնն ու Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանը իրենց ուժերը ի մի բերին? բժշկական անմիջական խնամքի պիտոյքներ հայրենիք հասցնելու համար: Այսպէս, Հիմնադրամի խնդրանքին անյապաղ ընդառաջելով, Կլէնտէյլ Էտվէնթիսթի մէջ այս նպատակով գոյացուած բժշկական աշխատակազմ մը շուտով հաւաքեց հարկ եղած իրերը եւ փոխանցեց Հայաստան Հիմնադրամին, որ իր կարգին զանոնք մաքսատունէ անցուց, հայրենիք փոխադրեց, եւ բաշխեց ամենէն կարիքաւոր շրջաններուն:

Ճգնաժամային պարագաներու, ներառեալ վիրային ցնցման համար նախատեսուած պիտոյքները պիտի գործածուին՝ փամփշտահար եղած, այրուածք ստացած, կամ պատերազմական գործողութիւններու հետեւանքով կեանքի սպառնացող այլ վնասուածք կրած բնակիչներ պատշաճօրէն խնամելու եւ անոնց վէրքերը կայունացնելու համար: Առաքուած պիտոյքներու շարքին են հրամայականօրէն անհրաժեշտ իրեր, ինչպէս օրինակ՝ օդով լեցուող դիմապարկեր (bag valve masks)՝ վիրաւորներու շնչառութիւնը վերահաստատելու համար, եւ վիրաբուժական որակի կարային ամրացուցիչներ (stitching staplers)՝ արիւնահոս վէրքերը անմիջապէս գոցելու համար: Բոլոր պիտոյքները նախատեսուած են թէ՛ հիւանդանոցային եւ թէ՛ արտահիւանդանոցային գործածութեան համար: Պիտոյքները ստանալով, հայրենի հիւանդանոցներու ու դարմանատուներու բժշկական անձնակազմերը իրենց խոր երախտագիտութիւնը յայտնեցին նուիրատուներուն:

Ասիկա առաջին անգամը չէ, որ Կլէնտէյլ Էտվէնթիսթը կը գործէ Հայաստանի մէջ եւ օժանդակութիւն կը տրամադրէ անոր: Անցեալ տարի, Հայաստան Հիմնադրամին հետ համագործակցելով, Կլէնտէյլ Էտվէնթիսթը բժշկական բազմաբնոյթ առաքելութիւն մը իրագործեց Նոյեմբերեանի Հիւանդանոցին մէջ: Այսպէս, Կլէնտէյլ Էտվէնթիսթէն 35 վիրաբոյժներէ, բժիշկներէ եւ այլ բժշկական արհեստավարժներէ բաղկացած աշխատակազմ մը աւելի քան 800 հիւանդ խնամեց եւ 40 վիրաբուժութիւն կատարեց Նոյեմբերեանի Հիւանդանոցէն ներս՝ նուազ քան մէկ շաբթուայ մէջ: Առաքելութիւնը մաս կը կազմէր Հայաստանին օգնելու եւ մասնաւորաբար սահմանամերձ Տաւուշի մարզի բժշկական սպասարկութիւնները բարելաւելու գծով Կլէնտէյլ Էտվէնթիսթի երկարաժամ յանձնառութեան:

«Սփիւռքահայերու եւ Կլէնտէյլ քաղաքին միջեւ գոյութիւն ունեցող կապը անքակտելի է», յայտնեց Կլէնտէյլ Էտվէնթիսթ Բժշկական Կեդրոնի Նախագահ եւ գլխաւոր գործադիր տնօրէն Քէվին Ռապըրթսը. «հետեւաբար երբ այս ողբերգութիւնը՝ Արցախեան քառօրեայ պատերազմը պատահեցաւ, Կլէնտէյլ Էտվէնթիսթը չէր կրնար ձեռնածալ ըլլալ դէմ յանդիման այն իրողութեան, որ Արցախի մէջ մարդիկ կը տառապէին եւ բժշկական պիտոյքներու անյետաձգելի կարիք կար: Ասիկա նուազագոյնն էր, որ կրնայինք ընել - բացի աղօթելէ, որ իր ուրոյն՝ աստուածային ազդեցութիւնը ունի»:




«Շնորհակալութիւն կը յայտնեմ Կլէնտէյլ Էտվէնթիսթ Բժշկական Կեդրոնի՝ Արցախի հրատապ կարիքները հոգալու նպատակին բերած իր սրտաբուխ սատարին համար», յայտնեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանի գործադիր տնօրէն Սարգիս Քոթանջյանը. «երբեմն, պատերազմական վիճակի մէջ լրջօրէն վիրաւորուածներու համար, լոկ վայրկեաններ կը բաժնեն կեանքը մահէն: Շնորհիւ Կլէնտէյլ Էտվէնթիսթի հայթայթած բժշկական անմիջական օգնութեան յառաջացած պիտոյքներուն, բազմաթիւ կեանքեր պիտի փրկուին»:

# ՄՈՒՍՈՒԼԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԽՈՒՐ ՕՐԻՆԱԿԸ



*Մուսուլի Սուրբ Էջմիածին եկեղեցին լուսանկարը առնուած է 2013– թուականին*

*ՍԱԳՕ ԱՐԵԱՆ*

*Օրեր առաջ իր լրումին հասաւ Իրաքի Մուսուլ քաղաքի ՏԱՀԷՇ ահաբեկչական խմբաւորման կողմէ գրաւման երկրորդ տարին: Մինչ իրաքեան բանակը կը յայտարարէր Ֆալլուժան այդ ահաբեկչական խմբաւորման ճիրաններէն ազատագրելու մասին լուրը, Իրաքի Վարչապետ Հայտար Ապատի մամլոյ ասուլիս մը տալով կը վստահեցնէր, որ իրաքեան բանակը կը պատրաստուի «արշաւել» դէպի Մուսուլ: Ապատի, որ հաւանաբար ապահովական մտահոգութիւններով չէր խօսեր գրոհի ժամկէտին մասին՝ կը վստահեցնէր, թէ ներկայ 2016 թուականի աւարտին Մուսուլը պիտի յայտարարուի ՏԱՀԷՇ-էն ազատագրուած տարածք: Խորքին մէջ առաջին անգամը չէ, որ իրաքցի բարձրաստիճան պատասխանատու մը կը խօսէր Մուսուլի ազատագրման մասին, բայց եւ այնպէս այդ խօսքերը լրջութեամբ չէին ընկալուեր, մանաւանդ, որ նախքան Մուսուլի ազատագրումը կային շատ այլ շրջաններ, ինչպիսին էր Ֆալլուժան, առանց որոնց անհնար է Մուսուլ հասնիլ:*

*Երբ Մուսուլի մասին կը խօսուի, մեր մտքերուն մէջ կը ծագի այնտեղի հայերու պարագան: Նախքան ՏԱՀԷՇ-ի այդ շրջան մուտք գործելը Մուսուլի մէջ կ'ապրէին բազմաթիւ հայ ընտանիքներ: Կը գործէին երկու Հայ Առաքելական եկեղեցիներ եւ տեղւոյն հայութիւնը կը վարէր բարեկեցիկ կեանք մը: Ըստ Իրաքի Ազգային Առաջնորդարանի կեդրոնական վարչութեան ատենադպիր Սարգիս Քոչունեանին, իրենց ունեցած տեղեկութիւններով՝ Մուսուլէն տեղահանուած հայութիւնը այսօրուան դրութեամբ կը գտնուի Զախօ, Էրպիլ, Հաւրէզք եւ Աւզրուկ աւաններուն, ինչպէս նաեւ մայրաքաղաք Պաղտատի մէջ: Քոչունեան, որ խօսած է «Արեւելք» կայքէջին՝ ըսած է, թէ իրենց տեղեկութիւններով Մուսուլի երկու հայկական եկեղեցիները ներկայիս կանգուն են եւ կը գտնուին ՏԱՀԷՇ-ի ձեռքը եւ կը գործածուին այլ նպատակներով: Քոչունեան նշած է, որ Մուսուլէն տեղահանուած հայ ընտանիքներուն թիւը կը հասնի եօթանասունի: Ըստ, անոր Պաղտատի Առաջնորդարանը՝ գլխաւորութեամբ առաջնորդ Տ. Աւագ Արք. Ասատուրեանի, օժանդակութիւններ կը տրամադրէ այդ ընտանիքներուն: Քոչունեան նկատել տուած է, որ Մուսուլի հայերը, նախքան այդ ծանր դէպքերը, եղած են ինքնաբաւ եւ վարած են բարեկեցիկ կեանք: «Երբ Մուսուլի հայերուն մասին կը խօսուի, բոլորը կը վկայեն, թէ անոնք ունեւոր եւ տնտեսապէս բարւոք կեանք մը կը վարէին ու ոչ ոք կը սպասէր, թէ անոնք մէկ օրուան մէջ ստիպուած ըլլան լքել իրենց տուներն ու կալուածները եւ հեռանալ շրջանէն»: Քոչունեան նաեւ վկայած է, որ վերջերս Էրպիլի մէջ վախճանած Տ. Առաքել Քհնյ. Գասպարեանի ճիգերուն շնորհիւ էր, որ մուսուլցի հայերը կարողացան ապահով կերպով դուրս գալ քաղաքէն, մինչ հազարաւոր քրիստոնեաներ եւ այլ համայնքի անդամ քաղաքացիներ զոհ դարձան եւ սպաննուեցան ՏԱՀԷՇ ահաբեկչական խմբաւորման ձեռամբ:*

*Այս բոլոր տուեալներէն անդին իրաքահայ պատկան մարմիններ մեծ տարակուսանքով կը խօսին Մուսուլի ազատագրումէն ետք հայութեան այդ շրջաններ վերադառնալուն մասին: Նոյն Քոչունեան հարց կու տայ՝ «Կը դժուարանամ ըսել, որ ե՞րբ կ'ազատագրուի Մուսուլը, բայց եւ այնպէս յստակ է, որ անցեալին հոն ապրող մեր եղբայրները պիտի չուզեն Մուսուլ վերադառնալ»:*

*Ասկէ շուրջ տարի մը առաջ էր, երբ մասնաւորապէս Իրաքի Քիւրտիստանի շրջաններուն մէջ հաստատուած մուսուլցիներու կարեւոր մէկ տոկոսը փափաք յայտնած էր Հայաստան տեղափոխուիլ: Այդ առումով անոնք դիմած էին Իրաքի մօտ Հայաստանի դեսպանատուն, բայց խնդիրը մնացած էր միայն պաշտօնական խօսակցութիւններու ծիրին մէջ: Մուսուլցիները, որ մութ գիշերուան մը մէջ Տ. Առաքել Քհնյ. Գասպարեանին առաջնորդութեամբ փախուստ տուած էին քաղաքէն, նոյնիսկ չէին կրցած իրենց ամենէն տարրական փաստաթուղթերը վերցնել: Ու այդ պատճառով էր նաեւ, որ Հայաստան երթալը կը դառնար անկարելիութիւն մը:*

*Ներկայիս անոնք կը վարեն գաղթականի կեանք: Անոնցմէ շատերը գտած են աշխատանք եւ հաստատուած այդ շրջաններուն մէջ: Այլ գետնի վրայ քիչ չէ թիւը այն հայորդիներուն, որոնք դիմած են ՄԱԿ-ի գաղթականներու գրասենեակ ու անհամբերութեամբ կը սպասեն իրենց հերթին հեռանալու դէպի Եւրոպա եւ Ամերիկաներ:*

*Ինչ ալ ըլլան յառաջիկայի զարգացումները, բացայայտ է, որ հայութիւնը պիտի կորսնցնէ Մուսուլի հայկական համայնքը:*

*Այս մէկը ենթակայական մօտեցում մը չէ, այլ մեր այսօրուան ապրած իրականութենէն դառն պատառիկ մը:*

*Դժբախտութիւնը միայն Մուսուլին չի վերաբերիր, որովհետեւ նոյն ծանր վիճակին կրնան մատնուիլ Իրաքի այլ քաղաքներուն մէջ մինչեւ այս պահը ապրող մեր հայրենակիցները: Իրաքի մէջ ծաւալած պատերազմները կրնան երկար շարունակուիլ, պարզ անոր համար, որ այդ երկրին, ինչպէս նաեւ Սուրիոյ համար քաղաքական լուծումներու ծրագիր մը չկայ սեղանին վրայ:*

*Սիւննի, շիի եւ քիւրտ համայնքերու «տարրալուծարան»ը համարուող Իրաքը անցնող տարիներուն «արեան բաղնիք» դարձաւ: Եւ այս համայնքներէն իւրաքանչիւրը կը մաքառի յանուն իր շահերուն:*

*Քիւրտիստան, որ կը գտնուի համեմատաբար աւելի խաղաղ պայմաններու տակ եւ կը վայելէ ամերիկեան բացայայտ հովանին, կը խօսի տագնապին բաժանումի ճանապարհով լուծում մը ապահովելու առաջարկով:*

*Այս առումով ուշագրաւ էր Քիւրտիստանի ղեկավար Մեսուտ Պարզանիի որդւոյն՝ Մեսրուր Պարզանիի ըրած յայտարարութիւնները, ուր ան առանց երկմտանքի կը խօսէր Իրաքը երեք բաժիններու բաժնելու անհրաժեշտութեան մասին: Մեսրուր Պարզանիի ըրած յայտարարութենէն ետք, մասնաւորապէս սիւննի ղեկավարները կը մերժէին նման առաջարկ ու կը հաւաստէին, որ իրենց համար Իրաքը անբաժանելի երկիր է ու իրենք պիտի պայքարին Իրաքի մասնատման դէմ: Նոյնն է պատկերը սուրիական հողին վրայ, ուր մէկէ աւելի համայնքներ տարբեր պայմաններու տակ նոյնպէս կը խօսին հաւանական բաժանումներու շուրջ:*

*Այս բոլորին դիմաց ու մանաւանդ Իրաքի պարագային մեծագոյն խօսք ունեցողը Միացեալ Նահանգներն է: Ճիշդ է, որ Իրաքի, ու մանաւանդ շիի հանրութեան մէջ քիչ չէ Թեհրանի ազդեցութիւնը, բայց եւ այնպէս Ռիատ-Անգարա-Ուաշինկթըն եռեակին առջեւ շատ հաւանական է, որ Թեհրան եւս ընդունի նոր առաջարկուած ձեւաչափ մը: Այդ ձեւաչափին առաջին ազդանշանները երեւելի սկսած են դառնալ Ֆալլուժայի մէջ ու այդ մեծ նահանգին գրաւումը պէտք է համարել նոր պատրաստուած ծրագրի մը նախասկիզբը:*

*Եթէ իրաքեան բանակը շարունակէ յաջողութեամբ պսակել իր սկսած զինուորական գործողութիւնները ու չտարուի ներքին տարակարծութիւններով, ապա յստակ կը դառնայ, որ Իրաքի համար նոր փուլ մը սկսած է:*

*Այդ ծրագիրը անպայման չի նշանակեր, որ Իրաք պիտի չմասնատուի, բայց հասկնալի կը դառնայ, որ արիւնահեղ դարձած այս երկրին մէջ քաղաքական նոր գործընթացներ սկիզբ պիտի առնեն:*

*Կառավարման առաջարկներուն մէջ ամենէն հաւանականը կը համարուի համադաշնային դրութեամբ (քոնֆետերալ) կառավարուող Իրաք մը, որուն մէջ հաւասարազօր իրաւունքներով գործող*

*Շար.ը էջ 18*



# ԱՅ՞Ս Է ՄԵՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ...



*ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ*

Ամիսներէ ի վեր հայկական եւ օտար մամուլին մէջ կը կարդանք, որ Կաթողիկէ Եկեղեցւոյ հովուապետը՝ Ֆրանչիսկոս Պապը, Հայաստան պիտի այցելէ: Իր բառերով՝ «Այցելութիւն մը առաջին քրիստոնեայ երկրին: Կու գամ իբր ուխտաւոր, այս Յոբել է Նական Տարւոյն մէջ, մասնակցելու ձեր ժողովուրդի հինաւուրց իմաստութեան եւ ըմպել ձեր հաւատքի աղբիւրէն, որ ժայռանման է, ինչպէս ձեր նշանաւոր խաչքարերը»:

«Ձեր պատմութիւնը եւ ձեր սիրելի ժողովուրդին նկատմամբ կատարուածները իմ մէջս կը յառաջացնեն հիացմունք եւ վիշտ: Հիացմունք, քանի որ Յիսուսի խաչին ու ձեր տաղանդաւոր մտքին մէջ գտած էք կրկին ոտքի կանգնելու ուժը՝ նոյնիսկ ամէնէն սարսափելի տառապանքներէն ետք, զորս պատմութիւնը կրնայ յիշել: Վիշտ՝ այն ողբերգութիւններուն համար, զորս ձեր հայրերը կրած են իրենց մաշկին վրայ»: http://www.aztagdaily.com/archives/300941 ]

Ահաւասիկ Քահանայապետին՝ ազնիւ մեծ մարդուն, գաղափարապաշտ հոգեւորականին ապրումները հայութեան նկատմամբ, որոնք ամբողջութեամբ ցոյց կու տան քաջարի հովուապետին կարեկցող նկարագիրը, ու ապա յանդուգն կեցուածքը արի քաղաքագէտին, որ չի վարանիր բարձրաձայն յայտարարելու ամբողջ աշխարհի առաջ. ԱՅՈ՛... հայ ժողովուրդին հանդէպ կատարուածը ցեղասպանութիւն էր:

Զարմանահրաշ այս մարդը եկած է իր յարգանքի տուրքը մատուցանելու մեր սրբացած նահատակներուն, համբուրելու մեր սրբատաշ խաչքարերը եւ իր օրհնութիւնը բաշխելու տառապեալ մեր ժողովուրդի զաւակներուն: Արդեօ՞ք անհրաժեշտ չէր ցոյց տալ մեր առաւելագոյն գնահատանքն ու պատիւը Ս. Քահանայապետին: Հետեւաբար ո՞ւր են մեր նուիրապետական աթոռներու գահակալները, նամանաւանդ Արամ Ա. կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիոյ, որ Ցեղասպանութենէն ճողոպրած հայութիւն է, եւ որպէս Կիլիկիոյ պատմական տարագրեալ Աթոռին եւ Արեւմտահայութեան պահանջատէր ներկայացուցիչ՝ աւագ պարտականութիւն եւ պարտաւորութիւն ունէր ներկայ գտնուելու այս բացառիկ ուխտագնացութեան, ինչպէս քահանայապետը կը նկարագրէ իր այցելութիւնը:

Արամ Ա. Կաթողիկոս, յառաջիկայ Սեպտեմբեր 30 - էն Հոկտեմբեր 4, հայրապետական այցելութիւն պիտի տայ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին , իր գահակալութեան 20-րդ տարեդարձի տօնախմբութեանց անձամբ նախագահելու համար: Նոյն նպատակով, մի քանի ամիսներ առաջ, հայրապետական այցելութիւն տուաւ նաեւ Արաբական Միացեալ Էմիրութեանց երկիրներ: Երբ կայ անձի փառաբանանք եւ պաշտամունք, հո՛ն է Արամ Կաթողիկոս, սակայն երբ կայ անհրաժեշտութիւն ազգովին գնահատելու մեզի զօրավիգ կանգնող քաջարի Քահանայապետին՝ չկայ ինք այնտեղ...: Ինչո՞ւ: Ընթերցողը թող տայ իր գնահատականը:

Վստահ եմ որ մեզմէ շատեր քաջ կը յիշեն թէ անցեալ տարի Ապրիլ ամսուն, Վատիկանի մէջ, ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով տեղի ունեցած կրօնական եւ աշխարհական տօնախմբութիւնները ի՜նչ արձագանգ տուին համայն մարդկութեան խղճին մէջ, եւ ինչպէ՞ս գայրացուցին Սուլթան Համիտներու եւ Երիտթուրքերու հարազատ որդի եւ ժառանգորդ Թուրք պետութիւնը, որ ցեղասպանութիւն գործադրելէ ետք տակաւին կը փորձէ այսօր իր եաթաղանէն մազապուրծ ազատած, անապատներու կիզիչ արեւուն տակ հալած ու մաշած հայու բեկորներուն վերջին մասնիկն անգամ արիւնաքամ դարձնելով՝ հայաթափ ընել իր երկրին սահմանամերձ բոլոր վերակենդանացեալ Հայ գաղութները...: Ե՞րբ պիտի արթննանք եւ արժանաւորապէս գնահատականներ տանք բոլոր անոնց՝ որոնք քաջութիւնը ունին ճշմարտութիւնը յայտարարելու, որպէսզի ցեղասպանութիւնները անգամ մը եւս չկրկնուի՜ն երկարագունդի այլ երկիրներու մէջ:

Բոլոր ժամանակներէ աւելի, պարտաւոր ենք ունենալ յանձնառու կեցուածք, բարձր հասկացողութիւն ցուցաբերելով ճգնաժամային այս օրերուն մեր առջեւ ծառացող՝ քաղաքական, հասարակական-ընկերային եւ տնտեսական բոլոր հարցերուն հանդէպ , երբ տակաւին չեն աւարտած սպառնալիքները հայ ժողովուրդի հանդէպ, երբ մեր դարաւոր թշնամին մեր դրան սեմին կանգնած սուր կը ճօճէ սպառնալով մեր գոյութեան դէմ:

«Ժողովուրդին հետ, ժողովուրդով եւ ժողովուրդին համար». այս բարձրաղաղակ լօզունգէն անդին, գործնականապէս ցոյց տանք որ մենք կը հաւատանք մեր ըսածներուն: Այս օրերուն երբ մեր հայրենիքի, Միջին Արեւելքի եւ մասնաւորաբար սուրիահայ եւ իրաքահայ եղբայրներն ու քոյրերը տնտեսական-հասարակական, ընկերային տագնապներէ կ՛անցնին, երբ անոնք ամէօրեայ օրհասական կացութեան մէջ կը մաքառին իրենց գոյութիւնը պահպանելու, համեստ ու քաջարի Քահանայապետը եկաւ Հայաստան, իր յարգանքի տուրքը մատուցանելու մեր նահատակներու յիշատակին եւ Կիւմրիի հրապարակին վրայ բազմահազար հայորդիներու առաջ վկայելու, որ ինք Հայ ժողովուրդին հետ է եւ անոր արդար դատի պաշտպան:

Յուսահատութիւնը՝ ժողովուրդներու համար կորուստի նշանակութիւն ունի: Մեր պայքարը այսօր քաղաքական է, եւ այդ պայքարը միայն զէնքով չէ որ պիտի յաղթահարենք, չենք ալ կրնար անշուշտ: Այնքան ատեն որ հայը կ՛ապրի, պիտի չլքէ իր իրաւունքները, որովհետեւ իր դատը անվիճելի է: Թուրքիան չի՛ կրնար մաքրուիլ իր ոճրապարտ ժառանգութենէն, արիւնաթաթախ անցեալէ մը, առանց գոհացում տալու հայկական արդար պահանջներուն: Պատմութիւնը չարափոխելու իր բոլոր փորձերն ալ միշտ ձախողութեան դատապարտուած են, որովհետեւ Քահանայապետին պէս հերոսներ չեն վարանիր յայտարարելէ թէ ինչ որ հայ ժողովուրդի դէմ կատարուեցաւ, կանխամտածուած եւ ծրագրուած ցեղասպանութիւն էր:

Վատիկանի արխիւները, որոնք բաց են այսօր մեր առաջ, նամանաւանդ այս Քահանայապետին գահակալութեան օրով, մեզ կը հրաւիրեն եւ կը մղեն աշխատանքի: Պատմութեան արձանագրութիւնը կը հաղորդուի սերունդէ սերունդ, եւ անոր սրբագրութիւնը կրնայ կատարուիլ միմիայն ոճիրին հեղինակներուն ժառանգորդներուն արդարամիտ կեցուածքով:

Այսուհետեւ՝ Ապրիլեան մեր ոգեկոչումները նահատակութեան, սուգի, ողբի ու ափսոսանքի արտայատութիւններ չեն, այլ կոչ ազգային վերածնունդի եւ նորոգուած ուխտի փուլ մը թեւակոխելու: Պարտաւոր ենք այսուհետեւ մոռնալ մեր անձնական հաշիւները, մեր նահատակներու անթաղ ոսկորներու խորանին առջեւ վերարժեւորել մեր անցեալի արարքներն ու նպատակները, եւ քալել դէպի հայ ժողովուրդի ազգային ձգտումներուն եւ տեսիլքին յաջողութեան ճանապարհէն, միշտ միացեալ ուժերով:


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**



## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

# «ԻՄ ԿԵԱՆՔԻ ՀԱՒԱՏԱՄՔԸ»

### ՀԵՂԻՆԱԿ՝ ՌՈՄԵՆ ԿՈԶՄՈՅԱՆ

***ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ***

*Գիրք կարդալը իմ նախասիրած զբաղմունքը ըլլալով հանդերձ, երբ կարգը եկած է գրախօսելու, յաճախ դժուարացած եմ այդ ընել, նոյնիսկ ինծի ծանօթ եւ կամ մտերիմ հեղինակներու գործերու պարագային, պարտքի տակ մնալով անոնց: Ուրեմն ինչո՞ւ կը գրուի այս գրախօսականը Ռոմեն Կոզմոյանի ցարդ հեղինակած առաջին գրքի՝ «Իմ Կեանքի Հաւատամքը» հատորի հրատարակութեան առթիւ, որ լոյս տեսած է 2015-ին, Երեւանի «Մուղնի» հրատարակչութիւնէն:*



*Բայց նախ, ո՞վ է Ռոմեն Կոզմոյանը: Մասնագիտութեամբ դիւանագէտ է: Երկար տարիներ աշխատած է Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէութեան մէջ, որպէս Արեւելեան Երկիրներու բաժնի վարիչ: Պաշտօնավարած է նաեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն Խորհրդային Միութեան դեսպանատան մէջ: Ապա Հայաստան վերադարձին, վարած է նոյն Կոմիտէութեան նախագահի տեղակալի պաշտօնը: Թոռն է Սարդարապատի Թանգարանին մէջի Մահապարտներու գունդի նկարի կեդրոնին գտնուող հոգեւորականին՝ Տէր Ղեւոնդին, աւազանի անունով՝ Արմենակ Մատնիշեանին եւ զարմիկը նոյն նկարի վարի շարքի աջէն երկրորդին՝ կամաւոր Մուկուչ Մատնիշեանին:*




*Իսկ ի՞նչ են այն համոզումները, որոնք կը կազմեն Ռոմեն Կոզմոյանի «Կեանքի Հաւատամքը»:*

*- Ամէն հայի համար նրա Հաւատն ու Աստուածը պէտք է իր հայրենիքը լինի, իր ժողովուրդը, իր հողն ու ջուրը:*

*- Ես դաստիարակուել էի այն պատմութեամբ ու բարոյականութեամբ, որ յանուն հաւատի ու գաղափարի, առաւել եւս, հայրենիքի շահի, մօր արիւնով ատրուշան է հանդցուել:*

*- Ես միշտ գտել եմ առանց բախման ապրելու ճարը:*

*- Մեր ուժը մեր հաւաքականութեան մէջ է, մեր միասնականութեան մէջ է, որ միշտ օդի ու ջրի նման պէտք է եղել հային: Այսօր այն պէտք է մեր երկրին՝ խիստ անհրաժեշտ միասնութիւն ու միասնականութիւն, մէկ դրօշի տակ համախմբուելու պարտադրանք: Ժամանակը ցոյց տուեց, որ դրօշները, խորհրդանշանները երբէք յաւերժ չեն: Վաղը կարող է մեր դրօշի վրայ մէկ գոյն աւելանալ, (պակասել՝ բացառում եմ), իսկ մեր գործն է պահել, պահպանել մեր հողը, գուրգուրալ այն, զօրակցել մեր ժողովրդին, պահել մեր ինքնութիւնը, հասկացողութիւնները, որոնք մէկ բառով դառնում են դրօշ: Հաւատում եմ ու հաւաստում, թէ այսօրուայ մեր հայրենիքը համայն հայութեան օրրանն է, տունը, օճախը:*

*- Սփիւռքը օր-օրի կորցնում է առանց այդ էլ իր սակաւ միատարրութիւնը, սնուելով միայն մէկ զարկերակից եւ պտտուելով միայն մէկ առանցքի՝ Հայրենիք շուրջ, որը եւ հանդիսանում է Սփիւռքը պահպանող առաջին եւ ամենահզօր ազդակը:*

*Աւելի քան երեսուն տարիներու վրայ երկարող յուշագրութիւններէ քաղուած վերեւի մէջբերումներուն ընդմէջէն կրնաք պատկերացնել, թէ ի՞նչպիսի գործունէութիւն ծաւալած է Ռոմեն Կոզմոյանը, յանուն հայութեան եւ հայրենիքի շահերուն՝ կամուրջներ նետելով անխտիր բոլորին: Իր յուշապատումները հայրենի թէ սփիւռքահայ մտաւորականներու մասին, արտացոլացումն են իր հաւատամքին: Ինք անկեղծօրէն կը հաստատէ, որ «իմ կեանքի լիբանանեան պատերազմի շրջանը իւրայատուկ է եղել, որի ժամանակ առաջին հերթին ես ինձ եմ ճանաչել ծայրայեղ վիճակներում, որ հզօր երկրի քաղաքացի ու պաշտօնեայ լինելու հպարտութիւնն եմ ունեցել, աշխատանքիս արդիւնքն եմ տեսել, չերկարեմ, այդ շրջանն ինձ համար աստեղային է եղել»: Այս հաստատումը մեզի կը յուշէ Մարթին Լուտէր Քինկի մէկ խօսքը՝ «անհատի մը ծայրագոյն արժէչափը ոչ թէ յարմարաւէտ ժամանակներու մէջ անոր ցուցադրած կեցուածքն է, այլ՝ մարտահրաւէրներու եւ հակամարտութեանց մէջ»: Եւ Ռոմեն Կոզմոյանի գործունէութիւնը լաւագոյն փաստն է իր հաւատամքին՝ յանուն ազգային շահին, վեր մնալ ամէն տեսակի խտրականութիւնէ եւ հասնիլ նոյնիսկ անոնց, որոնք կը վարանէին ընդունիլ Կոմունիստ Հայաստանի նուէրները:*

*Վստահ ենք, որ անոնք որոնք պիտի ընթերցեն Ռոմեն Կոզմոյանի «Իմ Կեանքի Հաւատամքը» գիրքը, իրենց իւրայատուկ տպաւորութիւնը պիտի կրեն անկէ, որովհետեւ բազում են այն գրառումները, որոնք զանազան յիշատակներ պիտի արթնցնեն անոնց մէջ եւ խորհրդածութեանց շարան մը պարգեւեն: Մանաւանդ, անոնց մօտ, որոնք նոյնիսկ մասամբ ծանօթ են հոն նշուած դէպքերուն եւ դէմքերուն: Երկար է շարանը հայրենի թէ սփիւռքահայ անուանիներու, որոնց հետ շփուած է Պրն. Կոզմոյանը: Թուենք միայն մի քանին: Խանզատեան, Կապուտիկեան, Քոչար, Սարոյան, Մավեան, Ծառուկեան, Վահեան, Ադդարեան, Իշխան եւ այլ յարգելիներ: Այս գրախոսականով մենք տուինք մեր կրած ընդհանուր տպաւորութեան համառօտ պատկերը, առանց անդրադառնալու այլ տպաւորութեանց, որոնք նոյնքան ուսանելի, հաճելի, յուզիչ եւ ոգեւորիչ են: 70 յօդուածներէ բաղկացած հատորի 275 էջերը կարելի է կարդալ «մէկ շունչով», որովհետեւ Պրն. Կոզմոյանի ոճը շատ հեզասահ է, իսկ լեզուն՝ շատ հարազատ ու մտերմիկ: Անգամ մը որ ընթերցողը սկսի կարդալ, պիտի կապուի եւ պիտի չուզէ գիրքը վար դնել, յաջորդ յօդուածի պարունակութեան անմիջապէս տեղեկանալու հետաքրքրութիւնէն մղուած: Բայց ամբողջ գիրքը կարդալէ ետք, անպայմանօրէն պիտի ուզէ վերընթերցել որոշ հատուածներ, որոնք «մէկ շունչէն» աւելին կը պահանջեն, կարենալ թափանցելու համար անոնց խորքը:*

*Եւ վերջապէս, պատասխանենք առաջին պարբերութեան մէջի մեր հարցումին, թէ ի՞նչու կը գրուի այս գրախօսականը: Պարզապէս շեշտելու համար յոյժ կարեւորութիւնը, որ ղեկավար դիրքերու վրայ գտնուողները պարտին ըլլալ «անաչառ, անկողմնակալ ու երեւոյթներին հեռանկարային պրիզմայով նայելու» ատակ անձնաւորութիւններ: Իսկ երբ ղեկավար դիրքերէ անցած են «հանգստեան», ըլլան նաեւ անկեղծ: Այդ «խոստովանանքը» կ'ընէ հեղինակը, հաստատելով թէ՝ «Տպաւորութիւններս ու գրառումներս խիստ անհատական ու մտերմիկ են, զերծ պայմանականութիւններից ու դիւանագիտական նպատակայարմարութիւնից: Վերջինս ստիպուած եմ գործադրել պաշտօնի բերումով, իսկ թղթի հետ ուզում եմ լինել անկեղծ ու անաչառ»:*

*Այդ անկեղծութիւնէն վստահաբար պիտի օգտուին ապագայ ղեկավարներ եւ հուսկ՝ ազգը: Պատանեկան տարիներէս աղօտ կերպով կը յիշեմ կարդացած ըլլալ Անդրանիկ Ծառուկեանի մէկ արտայայտութիւնը, ղեկավար դիրքերէ հեռացածներուն անկեղծութեան պահերուն յայտնած մտքերուն կամ կատարած խոստովանութեանց կարեւորութեան մասին: Եթէ յիշողութիւնս զիս չի դաւաճաներ, ակնարկը Կարօ Սասունիի կողմէ պատմութեան կարգ մը մութ էջերը լուսաբանելու մասին էր, հաւանաբար ի տես այդ մութ էջերու պատճառած պառակտումներուն եւ եղբայրասպանութիւններուն, որոնք կը ճնշէին իր խղճին վրայ: Որքա՜ն տարբեր կրնար ըլլալ մեր ճակատագիրը, եթէ մեր մէջ չպակսէին անկեղծանալու յանդգնութիւնը ունեցող ղեկավարներ: Փոխանակ պատմութիւնը խեղաթիւրելու գնով ժամանակաւոր «համբաւ» շահելու բայց յետագային բացայայտուելով բարոյալքուելու եւ այպանուելու, անոնց հանդէպ յարգանքն ու ակնածանքը պիտի խորանար ու գոյատեւէր:*

---

# ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆԻ «ԻՆՉ ՈՐ ՉԵՍ ՏԵՍՆԵՐ» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

*29 Յունիսին, փարիզաբնակ ականաւոր արձակագիր, բանաստեղծ եւ գրաքննադատ Գրիգոր Պըլտեան հայ ընթերցողին ներկայացուցած է իր նոր՝ «Ինչ Որ Չես Տեսներ» գիրքը:*



*Երեւանի փապերէն մէկուն մէջ հաւաքուած էին Պըլտեանի ստեղծագործութիւններուն սիրահարները, որոնք երկար ատենէ կը սպասէին գիրքին հրատարակութեան:*

*Շուրջ 30 տարի է, որ Պըլտեան կ'աշխատի այս հատորին վրայ, որ երկու գլուխի բաժնուած է:*

*«Թերթ»ի հետ ունեցած զրոյցին ընթացքին Պըլտեան ըսած է, որ իրեն համար դժուար է բնութագրել իր հեղինակած գիրքը, բայց մէկ բառով՝ անիկա «մարդու մարմինի» մասին է:*

*«Փորձեցի մարմինը դարձնել նիւթ: Ո՛չ թէ խօսիլ ցանկութեան մասին, այլ ցանկութիւնը ըլլայ, ոչ թէ անոր մասին, թէ ինչ կ'ուզէ մարմինը, այլ՝ գործողութեան մասին, բայց առանց բաց տեսարաններու: Գիրքին մէջ քիչ մը տարփականութիւն (էրոթիզմ) կայ, բայց բաց տեսարաններ չկան: Դժուար է գրել սեռային յարաբերութեան մասին, առանց պոռնկագրութեան, առանց գռեհկութեան: Այդ պատճառով ես դժուարութեամբ գտած եմ լեզուն, ընտրած եմ բառեր, որոնք սիրային ըլլան:*

*Բառեր կան հատորին մէջ՝ «քեզ կը սերտեմ, քեզ կը սիրեմ», համաձայնինք, որ միտքի մեծ տարբերութիւն կայ, տառացի չէ՝ «քեզ կը սերտեմ»ը, բայց իմաստ կ'արտայայտէ», ըսած է բանաստեղծը:*

*Գրիգոր Պըլտեան ըսած է, որ իրեն համար կարեւոր է նուրբ եզրեր գտնելը՝ գռեհկութեան ու սիրոյ նկարագրութեան միջեւ: «Երբ մարդը սիրով կը զբաղի, ինքզինք չի տեսներ, մենք կը դժուարանանք մենք մեզ տեսնել, որովհետեւ կը զգանք:*

*Ես նկարագրած եմ այն, ինչը մենք կ'ապրինք: Այդ սիրային վիճակներուն մասին գրած եմ, թէ ինչ կ'ապրինք», ըսած է բանաստեղծը:*

*Գրիգոր Պըլտեանի համաձայն՝ գիրքը «Հատուածներ Սենեակի Մասին» շարքին զարգացումն է, ուր ամէն բանաստեղծութիւն առանձին է, բայց միաժամանակ կ'արտայայտէ նախորդներուն իմաստը:*

# Massis Weekly

Volume 36, No. 26 Saturday, JULY 9, 2016


## Sarkisian Congratulates Obama on Independence Day Calls for Closer US-Armenia Ties



YEREVAN (RFE/RL) -- Armenia wants to deepen ties with the United States and hopes that Washington will maintain a "key role" in international efforts to end the Nagorno-Karabakh conflict, President Serzh Sarkisian said over the weekend.

In a letter to U.S. President Barack Obama congratulating him on America's Independence Day, Sarkisian said U.S.-Armenian relations "have always been marked by cordiality, mutual trust and respect."

"Building on a strong tradition of fruitful cooperation and the existing significant potential, Armenia stands ready to further deepen and develop the Armenian-American friendship and close partnership," he wrote.

Visiting Washington in late March, Sarkisian told U.S. Vice President Joe Biden that bilateral ties have already reached the "highest level in their history." He said they are growing in political, economic and security areas.

Sarkisian and Biden met on the sidelines of an international nuclear

Continued on page 4

## Armenia Wins European Basketball Championship for Small Countries



CIORESCU, MOLDOVA — Participating in a European competition for the first time, Armenian men's basketball team has won the championship for small countries beating Andorra in the final game.

Armenia took the initiative from the get go and immediately dominated the first quarter 25:12. At the end of the first half Armenia was ahead by 10 point 43:33

Retaining the advantage in the second half and never conceding the lead Armenia won by a final score of 79:71.

Once again guard Andre Spight Mkrtchyan was the high scorer with 27 points. He was also voted tournament MVP averaging 21.2 points per game.

Power forward Bryant Dunston Jr dominated the game with 14 rebounds and 15 points.

Armenia was the only team to feature two players in the All-Star Five. Spight Mkrtchyan and Dunston were joined by Paul Dick (Ireland), Colom Barrufet (Andorra) and Tevin Alexander Falzon (Malta).

With this victory Armenia has earned the right to participate in the qualifying stage of the European Championship next season.

## Putin, Hollande Discuss Nagorno-Karabakh Conflict Settlement

### Kerry Holds Phone Talks With Armenian, Azeri Leaders



MOSCOW (TASS) -- Russian President Vladimir Putin and his French counterpart Francois Hollande on Thursday discussed by phone the settlement in Nagorno-Karabakh and Ukraine, the Kremlin reported.

"Vladimir Putin informed Francois Hollande as head of a state-co-chair of the OSCE Minsk Group on the Nagorno-Karabakh settlement of the results of the June 20 three-party meeting with Presidents of Azerbaijan and Armenia Ilham Aliyev and Serzh Sarkisian in St. Petersburg," the statement said.

"The leaders of Russia and France expressed the hope that the results achieved at that meeting will contribute to promotion of the peace process. It has been agreed to continue active joint work within the framework of the OSCE Minsk Group in that important sphere," it said.

Also on Thursday, U.S. Secretary of State John Kerry telephoned the presidents of Armenia and Azerbaijan to discuss further steps in international efforts to resolve the Nagorno-Karabakh conflict.

President Serzh Sarkisian's office said he spoke with Kerry about the implementation of confidence-building agreements that were reached at his last two meetings with Azerbaijan's President Ilham Aliyev. It gave no details.

Aliyev and Kerry also reportedly discussed those agreements in their separate phone call. Azerbaijani news agencies said the two men agreed that the recent Armenian-Azerbaijani summits gave Karabakh peace process

Continued on page 4

## French MPs Vote to Criminalize Denial of Armenian Genocide

PARIS (AFP) - French members of parliament voted unanimously Friday to criminalize the denial of all crimes against humanity, including failure to admit that the mass killings of Armenians by Ottoman forces was a genocide.

The amendment, passed on the first reading, sets out penalties of up to a year in prison and a 45,000-euro ($50,000) fine for those who fall foul of the new law, which is expected to raise hackles in Turkey.

The French amendment, which must now go to the upper house Senate for approval, was a promise by President Francois Hollande during his 2012 electoral campaign.

An earlier law against Armenian Genocide denial was struck down by the country's constitutional court for obstructing freedom of speech.

The new legal project covers all events which French law deems to be genocide, crimes against humanity, war crimes or slavery. Currently, French law only bans Holo-



caust denial.

"This text will punish the challenge or the trivialisation of all crimes against humanity and war crimes," said Ericka Bareigts, the junior minister in charge of equality. She said that included the 1915-1917 killings that Armenians say wiped out some 1.5 million of their people.

"This is one of the greatest days of my political career," enthused Henri Jibrayel, a member of parliament whose ancestors survived the mass killings a hundred years ago.

The new law's backers hope to see it enter into force before the end of the year.

# Karabakh Accuses Azerbaijan of Beheading Dead Armenian Soldiers



STEPANAKERT (RFE/RL) -- Authorities in Nagorno-Karabakh have accused Azerbaijani forces of beheading three Armenian soldiers and mutilating the dead bodies of more than a dozen others during recent heavy fighting around the territory.

Karabakh prosecutors identified the three servicemen this week after launching formal criminal proceedings in connection with the alleged war crimes. They claimed that one of them, the 31-year-old Major Hayk Torosian, was still alive then his Azerbaijani captors began cutting off his head.

The headless body of another soldier, Kyaram Sloyan, was handed over to his family and buried on April 4, two days after the Azerbaijani army launched an offensive at two sections of the Karabakh "line of contact." The family living in a village in central Armenia received the 19-year-old's severed head a few days later.

The Armenian military said that Azerbaijan handed over Sloyan's head as part of exchanges between the two warring sides of the bodies of soldiers killed by them during the four-day hostilities. The mutual handovers were facilitated by the International Committee of the Red Cross.

Military authorities in Yerevan and Stepanakert alleged in April that virtually all of the recovered bodies of 18 Armenian soldiers had traces of mutilation. They said they will present evidence of the war crimes to foreign governments and international human rights bodies.

Azerbaijan's government and military strongly denied the allegations. They claimed that the Armenians themselves mutilated the bodies of dozens of Azerbaijani soldiers killed in the worst fighting in the Karabakh conflict zone since 1994.

According to the Karabakh prosecutors, 15 Armenian soldiers had their ears cut off after being killed by Azerbaijani forces on April 2.

Commenting on the latest allegations, Davit Babayan, a senior Karabakh official, said on Friday that the international community must react to what he called a manifestation of Azerbaijani "fanaticism and fascism."

"Normal people could not have done such things," Babayan told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "This once again shows who we are up against."

# Armenia Placed 56th in Global Information Technology Report 2016




YEREVAN -- Armenia is ranked 56th among 39 countries in the Global Information Technology Report 2016 published by the World Economic Forum today.

According to the report, Finland, Switzerland, Sweden, Israel, Singapore, the Netherlands and the United States are leading the world when it comes to generating economic impact from investments in information and communications technologies (ICT).

The Global Information Technology Report 2016 features the latest iteration of the Networked Readiness Index, which assesses the factors, policies and institutions that enable a country to fully leverage information and communication technologies (ICTs) for increased competitiveness and well-being.

Armenia's neighbors in the region are placed as follows: Georgia 58th, Turkey – 48th, Azerbaijan 53rd, Iran – 92nd.

Armenia's partners in the Eurasian Economic Union Russia and Kazakhstan are placed 41th and 39th respectively, Kyrgyzstan is 95th.

# Knesset Speaker Urges Israel to Recognize Armenian Genocide



JERUSALEM (Times of Israel) -- Israeli Kesset Speaker Yuli Edelstein (Likud) on Tuesday urged Israel to recognize the Armenian genocide, despite the friction this might cause in ties with Turkey, with which has recently normalized relations.

"We must not ignore, belittle or deny this terrible genocide," Edelstein declared as the Knesset marked the 1915 mass killing. "We must disconnect the current interests, bound to this time and place, and the difficult past, of which this dark chapter is a part."

Israel's refusal thus far to formally recognize the Armenian genocide is based on geopolitical and strategic considerations, prime among them relations with Turkey, which vehemently denies that Ottoman Turks committed genocide. Israel and Turkey signed a rapprochement deal last week, upgrading the diplomatic relationship after years of frosty ties over the 2010 Mavi Marmara incident.

"Let us not remain indifferent, even belatedly, to the suffering of the Armenians," Edelstein continued. "Preserving the memory of the Armenian genocide is important for everyone as human beings, as those who have moral responsibility and who strive constantly to improve and fix the world and society."

Dozens of members of the Jerusalem Armenian community rallied outside of the Knesset on Tuesday demanding the government recognize the atrocities 101 years ago.

Meretz leader Zahava Galon, who initiated the Knesset plenum session, said there had been Foreign Ministry pressure on the parliament not to hold the session due to "diplomatic sensitivity" over Turkey.

"But I say that despite this, the Knesset should recognize the Armenian genocide," she said.

President Reuven Rivlin, who was one of the most outspoken advocates for recognition of the genocide during his time as Knesset speaker, skirted the term during the centenary commemoration last year, disappointing Armenian leaders. He used it, however, several weeks earlier at a different event.

Israel's ongoing denial of the Armenian genocide has thus far survived several debates in the Knesset and even efforts by a former education minister to add the topic to school curricula.

# Armenia Receives Tier 1 Rating in Annual U.S. Trafficking in Persons Report




WASHINGTON, DC -- U.S. State Department released on Thursday the 2016 Trafficking in Persons (TIP) Report, which looks at how 188 countries, including the U.S., were tackling this serious crime throughout 2015 and into 2016. For the fourth year in a row, Armenia is a Tier 1 country, recognized as fully committed to fighting trafficking in persons.

The report emphasized the role of Armenian anti-trafficking interagency group, which includes representatives of the government, civil society and international organizations.

The Government of Armenia fully meets the minimum standards for the elimination of trafficking. It also affords foreign trafficking victims the same rights and services as Armenian citizens. The report highlights.

Susan Coppedge Ambassador-at-Large to Monitor and Combat Trafficking in Persons, stated that Armenia made progress in this report. She noted that progress is made when governments evaluate the recommendations in the report, help fight against human trafficking, prevent crime, bring the guilty to account and help persons who have suffered from trafficking, and that it is in this case that these countries—just like Armenia— appear in a higher group.

"The success of the anti-trafficking group shows what can be achieved when the government and civil society listen to each other and cooperate. This group is an example in the fight against difficult issues," said U.S. Ambassador to Armenia Richard Mills.

In 2015, the Armenian government allocated 46,259,000 drams ($95,000) for assistance to trafficking victims

## Glendale Adventist Medical Center, Armenia Fund Team Up to Provide Emergency Medical Supplies to Armenia and Artsakh

GLENDALE -- Responding to the urgent medical and humanitarian needs of the civilian population affected by the four day war in Nagorno Karabakh (Artsakh), the Glendale Adventist Medical Center and Armenia Fund recently partnered together to provide high quality medical supplies for emergency and trauma purposes. At a very short moment's notice, the supplies were quickly assembled by a team of medical professionals at Glendale Adventist Medical Center and then transferred to Armenia Fund for clearance, transportation, and distribution to the areas in most need.

The emergency and trauma supplies are designed to properly treat and stabilize civilians affected by gun shots, burns, and other life threatening trauma as a result of the war hostilities. They included critically needed items, such as bag valve masks to help patients breathe and surgical grade stitching staplers designed to immediately close bleeding wounds. The supplies are designed to be used in the field or at a hospital. The medical professionals treating civilians who were rushed to the hospital and nearby medical centers were extremely grateful for the supplies.

Working in Armenia and providing assistance is not new for Glendale Adventist Medical Center. Last year, the hospital partnered with Armenia Fund again for a medical mission to the remote rural hospital in Noyemberyan. The team of 35 surgeons, doctors, and medical professionals, treated more than 800 patients and performed 40 surgeries in less than one week. This is part of GAMC's long term commitment in helping Armenia, specifically rural medicine in the borderline region of Tavush.

"The bond between the descendants of diaspora Armenians and Glendale is inseparable. Therefore, when this tragedy occurred, Glendale Adventist Medical Center could not stand idle, knowing that these countrymen and women were suffering and in need of medical supplies. It was the least we could do, other than pray for peace, which has its own divine impact," stated Kevin A. Roberts, RN - President and CEO of Glendale Adventist Medical Center.

"I would like to thank Glendale Adventist Medical Center for their wholehearted support in a field where Artsakh needs all the help it can get. At a time of war sometimes minutes separate life from death for the critically wounded. Thanks to the advanced medical emergency kits supplied by the GAMC, lives will be saved," stated Sarkis Kotanjian, Executive Director of Armenia Fund.

## Commitment at the Heart of AUA's 25th Anniversary Celebrations in Yerevan




YEREVAN -- A series of exciting events were organized in Yerevan recently in honor of AUA's silver jubilee. These included a special art exhibition featuring the works of 25 artists, the opening of the Entrepreneurship and Product Innovation Center (EPIC) along with a conference reflective of AUA's role in entrepreneurship and innovation, a concert and awards ceremony at the Aram Khachaturian Grand Concert Hall, and an elegant gala dinner at Florence Restaurant.

The anniversary theme, "More Than An Education – A Commitment," was the central theme of the festivities, reflective of AUA's crucial role in providing world-class teaching, research, and service programs that prepare students and enable faculty and researchers to address the needs of Armenia and the surrounding region for sustainable development. AUA opened its doors to 101 students on the same day the Republic of Armenia was declared on September 21, 1991 and has evolved into one of the country's most esteemed institutions, successfully creating a setting that values and develops academic excellence, free inquiry, integrity, scholarship, leadership, and service to society.

The kick-off event was the "A Quarter Century. A Salute to Education" art exhibition held at AUA's Akian Gallery featuring the works of 25 artists. The exhibit, a joint collaboration with the Antikyan Gallery, reflected the diversity of media, styles and narratives of the Armenian nation.

The opening of the newly renovated state-of-the-art AUA Entrepreneurship and Product Innovation Center (EPIC) was also a highlight of the celebrations. EPIC will serve as a platform for promoting entrepreneurial education, cross disciplinary collaboration, and startup incubation at AUA. The opening was preceded by a special conference aimed at exploring Armenia's technology and innovation capabilities, as well as challenges and opportunities for collaboration. The conference also examined AUA's role in developing Armenia's entrepreneurial ecosystem and EPIC's future goals in this sphere.

Later that evening, guests attended a special Gala Concert held at the Aram Khachaturian Grand Concert Hall. Awe-inspiring performances were delivered by the Hover State Chamber Choir and the Armenian National Philharmonic Orchestra.

The following day, AUA celebrated the graduating class of 2016 with a commencement ceremony led by AUA President Dr. Armen Der Kiureghian. A highlight of the ceremony was a speech delivered by one of this year's valedictorians - Setrag Hovsepian. Setrag, originally from Damascus, is a recipient of the Akian Family Foundation Scholarship, along with several other Syrian-Armenian students enrolled at AUA. Footage of Setrag's touching speech describing how this was the first time in his life he had the opportunity to take part in a graduation ceremony went viral on the internet.

AUA's 25th anniversary celebrations in Yerevan concluded with a memorable Gala dinner where AUA faculty, staff, alumni, benefactors, and board of trustees from all over the world gathered to celebrate AUA's achievements.

AUA 25th anniversary celebrations will also be organized in Los Angeles with a special Gala being held at the Beverly Wilshire Hotel on November 19. Longtime AUA benefactors Dr. Mihran & Mrs. Elizabeth Agbabian will be among those being honored for their ongoing generosity and commitment to the University.

## New Engineering Laboratories in Armenian Schools



YEREVAN -- Recently, the Anoushavan Abrahamian Education Fund (AAEF) initiated the project of establishment of new engineering laboratories. These laboratories will be set up in each school sponsored by the AAEF. Within the framework of this project the AAEF cooperates with the Union of Information Technology Enterprises (UITE). The UITE will furnish the laboratories and give permanent technical support with the financial support of AAEF. During the first phase of the project engineering labs will be established in Maralik, Shirak Marz and Armavir, Armavir Marz. The Ministry of Education and Science of the Republic of Armenia will assist in providing the laboratories with qualified teachers.

Through this project the students will study computer programming, 3-D printing and robotics design, development and management. The knowledge and skills gained in these areas are in high demand in Armenia. The new project will also enable the rural youth to increase their participation in the development of vocational professions.

The AAEF has more than 10 years of history. It was founded by Anoushavan and Ofik Abrahamians, in Los Angeles and aims to support rural youth in gaining vocational skills and professions for successful employment opportunities in their towns and villages.

In this regard, during the past 10 years an education complex in each of 10 marzes of Armenia has been fully or partially reconstructed. Six vocational training classrooms were opened in each school enhancing the development of vocational training in Armenian marzes.

## Kharpert Cultural Association Promotes Daybreak – An Armenian American Story



PASADENA -- On June 26th, a kickoff fundraising event for the Los Angeles production of a new play about the Armenian-American story was held at the Pasadena home of Margaret and David Mgrublian. The elegant evening was sponsored by the Kharpert Cultural Association of America, Inc., under the leadership of the board; Dr. Garbis Der-Yeghiayan, Hasmig Agemian, Sato Karajerjian, Tamar Krekorian, Eve Mekerdichian, and board member emeritus, Mary Najarian.

Written by playwright Joyce Van Dyke, the play had a sold-out production in Boston under its earlier title, Deported/a Dream Play, and was honored by the Massachusetts State Legislature for its commemoration of the genocide. The play was subsequently produced at Tufts University, and had staged readings in New York, London, and Yerevan. In 2015 the Armenian Ministry of Culture funded its translation into Armenian.

Daybreak is inspired by the true stories of the playwright's grandmother and her best friend, the mother of Dr. H. Martin Deranian. The two women were deported together from Mezireh in 1915. Dr. Deranian is the well-known author of The Armenian Orphan Rug and Hussenig, among other books, and he collaborated with the author in developing the play.

Daybreak is slated for a fall 2017 production in Los Angeles, produced by Gary Guidinger and Linda Toliver, and directed by Jules Aaron. When asked why non-Armenians would be interested in doing a play about this topic, Gary stated, "This play is what we look for in the theater. It is compelling, adventurous and extremely relevant. It can open doors to a distressed world."

Daybreak's playwright and producers were special guest speakers at the dinner party which was also attended by members of Daybreak's Production Advisory Board including party host Margaret Mgrublian, Helen Haig, and Diana Hekimian; two other board members who were unable to attend were Maggie Goschin and Joan Agajanian Quinn.

"When our grandparents found their voice and told their story, little did they know that we would be here today talking about the future of Joyce's play – or how relevant it would be to today's issues," stated Helen Haig.

The party gave a wonderful boost to the production fundraising goal. The next step will be to reserve a Los Angeles venue for fall 2017.

## Golden Apricot Film Festival Presents Partnership With Foreign Embassies

YEREVAN -- Organizers of the 13th Golden Apricot Yerevan Film Festival today presented the cooperation with a number of Foreign Missions accredited to Armenia. The best French, Russian and British films will screened within the framework of the festival.




Golden Apricot Film Festival in cooperation with British Council in Armenia will present a special film program, dedicated to the 400th anniversary of renowned British writer William Shakespeare's death. The best films, based on Shakespeare's works, will be screened in the frames of the program.

The "French New Cinema" program will be realized in cooperation with the Embassy of France in Armenia. It includes the best three films of French production. The program will open with Two Remis, Two, (2015) by Pierre Léon.

The "Danish New Cinema" program will be implemented in cooperation with the Danish Film Institute. The program will present the best Danish films of the last five years. The Commune (2015) by Thomas Winterberg will open the program.

The four best films by Basque directors will be presented in a separate film program titled "Basque New Cinema." The film Autumn without Berlin (2015) by Lara Izagirre is to open the film program.

## Collecting William Saroyan Memorabilia



YEREVAN -- Yerevan based Intellectual Renaissance Foundation has opened a branch in Fresno. In 2015, the foundation has purchased the house of the great Oscar winning writer and Pulitzer Prize receiver William Saroyan. The house is located on 2729 Griffith Way, Fresno, which has a Local Historic Preservation status and where Saroyan wrote 10 of his works. Here, the foundation is going to open a House Museum of William Saroyan.

The project is dedicated to creating an environment, where a significant part of William Saroyan's Literary Heritage will be stored. It will become a symbol of William Saroyan's house, where he lived and found inspiration for writing. The house museum is going to be a cultural center for Armenians from all over the world to come and get to know the lifestyle of the great writer. At the same time, it will be a center for international admirers of William Saroyan. The house museum will become a cultural center for literary events, readings and performances dedicated to the great writer. The foundation has contacted some of the central institutions, which possess a significant part of Saroyan's memorabilia, such as William Saroyan Foundation, Stanford University, the University of Berkeley, as well as the State University of Fresno.

The foundation is interested in collecting the following items:

-Pictures and videos, capturing the atmosphere of his houses in Fresno and Paris

-Saroyan's books signed by himself, as well as his diaries, personal papers, contracts and first editions of his works

-Letters, manuscripts, notes, paintings and drawings

-Journals and notebooks, correspondence, business records, fan mail, memorabilia

-Artworks, paintings, notes, and his furniture

-The great writer also had a habit of collecting hats, shoes, even rocks, and surprisingly strange items.

All donors contributing to the collection will be properly acknowledged.

info@saroyanhouse.com

## Sarkisian Congratulates Obama

**Continued from page 1**

security summit that was hosted by Obama. The Armenian president was among around 50 heads of state invited to the summit.

"We greatly appreciate the U.S. engagement, as a co-chair of the OSCE Minsk Group, in the Nagorno-Karabakh peaceful settlement process," Sarkisian wrote to Obama. He said the "key role" played by the U.S. was underscored when the international community scrambled to de-escalate the Karabakh conflict in April.

"We expect that the United States, jointly with the other [Minsk Group] co-chair countries -- Russia and France -- will continue its active mediation mission towards the establishment of a stable and durable peace in our region," added the letter.

The Armenian presidential press office publicized the letter to Obama immediately after Sarkisian visited the U.S. Embassy in Yerevan on Saturday to congratulate Ambassador Richard Mills on the U.S. national holiday.

"The United States greatly values the strong bond of friendship between our two countries," the embassy wrote on its Facebook page afterwards.

## Putin, Hollande Discuss Nagorno-Karabakh

**Continued from page 1**

"new impetus."

The U.S. State Department said Kerry asked Presidents Sarkisian and Aliyev to fulfill confidence-building measures and other commitments they made to advance the peace process at a May 16 meeting in Vienna and at a June 20 meeting in St. Petersburg.

Talks on Nagorno-Karabakh have been held on the basis of the so-called Madrid Principles suggested by co-chairs of the Minsk Group of the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) - Russia, France and the United States - in December 2007 in the Spanish capital.

They include three key principles written in the Helsinki Final Act: refraining from the threat or use of force, territorial integrity and the right to self-determination.

## ԳԻՏՈՒԹԻՒՆ

# ԱՐՏԵՄ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆ

### Շօշափելիքի զգացողութեան մոլեկուլային հիմունքների բացայայտող հայազգի գիտնականը



ՅՈՎԱԿԻՄ ԶԱՔԱՐԵԱՆ

Ասում են, որ մեր ազգը կրթութիւն, գիտութիւն սիրող ազգ է: Ձնայած եկեղեցաշինութեան բումը եւ մեր գիտութեան չֆինանսաւորուած՝ կիսամեռած վիճակը հակառակի մասին են փաստում, բայց որոշել եմ շաբաթը մէկ ներկայացնել այն հայ գիտնականներին, որոնք համաշխարհային մակարդակի հետազօտութիւնների ամենաառաջին գծում են, որոնք իրենց ոլորտներում մեծագոյն հեղինակութիւններ են, բայց որոնց մասին Հայաստանում գրեթէ բան չգիտեն: Ինքներդ կը դատէք՝ որքան ենք կրթութիւն ու գիտութիւն սիրում:

Սկսենք Արտեմ Փաթափութեանից (Ardem Patapoutian): Նեյրո-կենսաբան, Սկրիպսի (SCRIPS) հետազօտական ինստիտուտի ղեկավար, ԱՄՆ: Շօշափելիքի զգայարանը մարդու հինգ զգայարաններից մէկն է, որի միջոցով զգում ենք բնութեան մէջ գոյութիւն ունեցող թէ ֆիզիքական (ջերմաստիճան, մեխանիկական), թէ քիմիական (նիւթեր, որոնք առաջացնում են ցաւ, քոր եւ այլն) գրգիռներ: Շօշափելիքի զգայութիւնը ձեւաւորւում է շնորհիւ զգայական նեյրոնների, որոնք, սփռուած լինելով օրգանիզմի արտաքին եւ ներքին մակերեսի վրայ, գրգիռը հաղորդում են ուղեղ: Զգայական նեյրոնները կարողանում են տարբերակել վնասակար՝ ցաւ, բորբոքում առաջացնող գրգիռներն անվնասներից: Ձնայած շօշափելիքի զգայարանի գոյութեան մասին մենք գիտենք շատ շուտուանից, սակայն մեխանիզմը եւ մոլեկուլները, որոնք առաջացնում եւ ձեւաւորում են այդ զգացողութիւնը, երկար ժամանակ մնում էին անյայտ: Փաթափութեանը զգայական նեյրոնների վրայ բացայայտեց յատուկ կառուցուածքներ՝ իոնային անցուղիներ, որոնք ակտիւանում են արտաքին ջերմաստիճանի տատանումներից: Այսինքն, ջերմաչափ են, մեր օրգանիզմի մոլեկուլային ջերմաչափերը: Հետաքրքիր է, որ իր յայտնաբերած իոնային անցուղիների մի մասը գործում են նաեւ որպէս քեմոսենսորներ եւ մասնակցում են ցաւի եւ բորբոքային գործընթացների զգացմանը: Փաթափութեանի լաբորատորիայի կողմից մշակուել է TRPA1 անուամբ փոքր մոլեկուլ, որ ճնշում է այդ անցուղիների գործունէութիւնը եւ ունի բժշկական նշանակութիւն: Այս պահին, այդ մոլեկուլը գտնւում է կլինիկական փորձարկումների մէջ: Սրանով պատմութիւնը չի աւարտւում: Երկար ժամանակ անյայտ էին նաեւ մեխանիկական բնոյթի գրգիռներով առաջացող շօշափելիքի զգացողութեան ձեւաւորման մեխանիզմները: Միայն վերջերս, կրկին Փաթափութեանի կողմից, բացայայտուեցին երկու տեսակի իոնային անցուղիներ՝ Piezo1 եւ Piezo2, որոնք ակտիւանում են մեխանիկական գրգիռների առկայութեամբ: Այս պահին Փաթափութեանի լաբորատորիայում հետազօտում են Piezo1-ի եւ Piezo2-ի կառուցուածքը եւ դրանց դերը ֆիզիոլոգիական տարբեր վիճակներում: Այսպիսով, Փաթափութեանն այն գիտնականն է, ով բացայայտել է շօշափելիքի զգացողութեան մոլեկուլային հիմունքները: Բացի ֆունդամենտալ նշանակութիւնից, իր հետազօտութիւնների շնորհիւ հնարաւոր կը լինի բուժել մի շարք խանգարումներ, օրինակ, քրոնիկ ցաւի հետ կապուած հիւանդութիւնները: Արտեմ Փաթափութեանը միակ հայ գիտնականն է, ով Howard Hughes Medical Institute-ի իրական անդամ է, մի կառոյց, որի անդամ են Նոբելեան մրցանակակիրների մեծ մասը:

Յ.Գ. Արտեմ Փաթափութեանը այս տարի Մայիսին դասախօսութեամբ հանդէս եկաւ Հայաստանում:

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

# ԼԵՆԱ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆ-ԳՈՐԹՈՇԵԱՆ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ ՏՆՕՐԷՆՈՒՀԻ ՔԼԱՐՔ ՄԱԿՆԵԹ ՀԱՅ ՍՔՈՒԼԻ

Լենան ստանալէ ետք իր նախակրթական եւ միջնակարգ ուսումը Լիբանանի Մարտիկեան, Մոնթեպելլոյի Մեսրոպեան եւ Հոլիվուտի Ալէք Փիլիպոս Ազգային վարժարաններէն ներս, ան կը շարունակէ հետեւիլ իր բարձրագոյն ուսման՝ Նորթրիճի Քալիֆորնիոյ Նահանգային Համալսարանին մէջ: Ան կը ստանայ երկու տիտղոսներ՝ Պսակաւոր Գիտութեան, ուսողութեան մէջ, եւ Մագիստրոս Գիտութեան՝ կազմակերպումի, ղեկավարումի եւ գործելակերպի ուսուցման մարզերուն մէջ:



Շուրջ երեսուն տարի ան ունեցած է աշխուժ կրթական դաստիարակչական գործունէութիւն:

1986-1988 ուսուցիչի օգնական Կլենտէյլի R.D. White նախակրթարանին մէջ:

1988-1989 ուսուցչուհի Կլենտէյլի Toll Միջնակարգ վարժարանին մէջ:

1990ին կը սկսի դասաւանդել ուսողութիւն Կլենտէյլի Հայ Սքուլին մէջ եւ միաժամանակ կը վարէ վարժարանին Հայկական Ակումբին կազմակերպչական աշխատանքները:

1999ին կը կոչուի Հուվըր Հայ Սքուլի փոխ-տնօրէնի պաշտօնին: Այնուհետեւ Տիկ. Լենա Պաղպուտարեան-Գորթօշեան կը նշանակուի Թուաբանութեան Տեսչուհի՝ Լոս Անճելըս քաղաքի կրթական շրջանին մէջ, օգտակար հանդիսանալով 81 շրջաններու հանրային վարժարաններուն: Միեւնոյն ատեն ան կ'աշխատի նահանգային մակարդակով տարբեր յանձնաժողովներու մէջ:

2011 Օգոստոս 22ին Լենան կը ստանձնէ Լա Քրեսենթայի Մակնեթ Հայ Սքուլի փոխ-տնօրէնուհիի պաշտօնը: Իսկ այժմ ան նշանակուած է Տնօրէնուհի՝ նոյն պատկառելի կրթական հաստատութեան որ ստանձնեց Յուլիս 1, 2016ին:

# ՄԱՇՏՈՑ ԳՈԼԷՃԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Ազգային հպարտութեան եւ երախտագիտական զգացումներու օր մըն էր, երբ շրջանաւարտներ եւ ծնողներ հաւաքուած էին տօնակատարելու համար Մաշտոց Գոլէճի 24-րդ տարուայ հունձքի յաջողութիւնը:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի Յունիս 26, յետ միջօրէին Կլենտէյլի Phonecia ճաշարանի սրահին մէջ: Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեամբ եւ ապա Տէրունական աղօթքով ձեռնարկը սկսաւ:

Խանդավառ մթնոլորտի մէջ գործադրուեցաւ ճոխ յայտագիր մը, որու ընթացքին բացման խօսքով հանդէս եկաւ Գոլէճի Նախագահ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան. շնորհաւորելէ ետք շրջանաւարտներն ու անոնց հարազատները ան յորդորեց շրջանաւարտներուն բաժնեկցելով անոնց հետ չորս կարեւոր սկզբունքներ:

Ա- Հաւատարիմ մնալ մեր հայ ընտանեկան սրբութիւններուն եւ աւանդութիւններուն:

Բ- Անաղարտ պահել մեր մայրենի լեզուն, հպարտ զգալ մեր դարաւոր մշակոյթով եւ պատմութիւնով ու զանոնք ներմուծելով իրենց եւ իրենց զաւակներուն ամէնօրեայ կեանքին ընթացքին:

Գ- Հպարտ զգալ հայրենիքով, սատարել անոր վերելքին եւ հեռու մնալ փնովելէ:

Դ- Պանծացնել մեր հոգեւոր արժէքները, որպէս ժառանգորդները առաջին քրիստոնեայ ազգին սիրելով զԱստուած, եկեղեցի յաճախելով, Աստուածաշունչ կարդալով եւ աղօթելով:

Ապա բեմ բարձրացան 48 շրջանաւարտ մանկավարժութեան բաժանմունքէն ստանալու համար իրենց վկայականները ձեռամբ Գոլէճի Նախագահի եւ հոգաբարձութեան ատենապետ Տոքթ. Վարուժան Կապուչեանի:

Շրջանաւարտներու անունով խօսք առաւ Լիլիթ Ուլեան: Ան

Շար.ը էջ 19

# ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՅԸ «ԱՅՍՏԵՂԷՆ ԿԸ ՍԿՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ»



ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Դոկտ. Սուրէն Դանիէլեանն է՝ Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի վարիչ տնօրէնը: Պոլսահայ մանկավարժ եւ «Նոր դպրոց»-ի հիմնադիր Յովհաննէս Հինդլեանի ծննդեան 150-ամեակին նուիրուած երկօրեայ գիտաժողովին ենք: Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, իսկ երկրորդ օրը շարունակուեցաւ Տաւուշի մարզի Կայան աւանին մէջ, որովհետեւ հոն՝ Կայան աւանին մէջ կանգուն է դպրոց մը՝ Յովհաննէս Հինդլեանի անունով, որ հայեցի կրթութիւն եւ դաստիարակութիւն կը ջամբէ հայ նոր սերունդին, որ, տակաւին, «վճռած» է մնալ՝ «սահմանամերձ» այս շրջանը: Եւ այս՝ Ազրպէյճանի սահմանէն միայն հարիւր մեթր հեռաւորութեան վրայ: Եւ հայկական դպրոց, եւ Սուրէնին հպարտանքը՝ «Այստեղէն կը սկսի Հայաստանը»:

Եթէ շրջանի բնութեան գեղեցկութիւնը կը գգուէ ու կ՛անցնի ամէն ուշադրութիւն եւ հիացմունք, բայց կայ նաեւ հոգեկան ազդակը: Իսկ ո՞րն է հոգեկան այդ ազդակը: Որ՝ ոչ միշտ ապահով այս «սահմանամերձ» շրջանին մէջ հայը կը շարունակէ ապրիլ, բայց նաեւ՝ զարգանալ: Աշակերտները, տնօրէնը եւ ուսուցչական կազմը նոյնինքն Կայան աւանի Յովհաննէս Հինդլեան վարժարանին մէջ մեզ դիմաւորեցին: Իսկ դիմաւորե՞լը: Հայկական պար, երգ, հաց ու աղ, եւ տակաւին՝ երիտասարդ աշակերտ աղջիկներու զինուորական տարազով՝ միշտ պատրաստի գիտակցութիւնը: Անդրադարձայ, որ հայկական երգն ու պարը որքա՜ն զօրաւոր են եղեր: Եթէ սրահներու կամ գեղարուեստական յայտագիրներու ընթացքին կ՛ունկնդրես հայկական երգը եւ կը հաղորդուիս արուեստով, ապա բոլորովին տարբեր կ՛ըլլայ պատկերը, երբ «սահմանամերձ» շրջանին մէջ, առօրեայ իր մտահոգութիւններուն եւ գուցէ վախերուն եւ անապահովութիւններուն ընդմէջէն, կ՛ապրիս այդ երգերուն տուած հոգեկան ուժը: Եւ այդ երգերուն եւ պարերուն ընդմէջէն, նոյնինքն Կայան աւանին մէջ, կը զգաս հայրենի հողին ինքնութիւնը եւ անոր տուած «արժանապատուութիւնը» քեզի՝ իբրեւ հայու: Այդ հողը, որ պէտք է պահուի: Եւ երբ հայ տղաքն ու աղջիկները կ՛երգէին ու կը պարէին, տեսայ, թէ որքա՜ն հաստատ էր իրենց շրթներէն ելած իւրաքանչիւր բառ: Բայց նաեւ՝ որքա՜ն կանգուն էին անոնք իրենց պարերու իւրաքանչիւր շարժումին ընդմէջէն, որովհետեւ անոնք կ՛երգէին ու կը պարէին հողի մը վրայ, որ պահուած է ու տակաւին կը պահպանուի նահատակութեամբ, եւ որուն մէջ խարսխուած է ապրելու ուժը: Այդ օր՝ Մայիս 27-ին, անոնք այդ ուժը բաժնեկցեցան մեզի հետ:

«Կայան աւանը ինծի համար յաւերժութիւն է»: Լենա Վարդանեանն է՝ Յովհաննէս Հինդլեան վարժարանի տնօրէնը: «Առանց այս վայրին՝ չեմ կրնար ապրիլ»: Լենային համար իր ամբողջ էութիւնը ապրող կեանքի մը մէջ է: Հայ կնոջ ամուր կերպար՝ տոկուն նկարագիրով եւ ազգային անշեղ ինքնութեամբ, որ հայ նոր սերունդին կրթութիւն կը ջամբէ: Ան յուսահատիլ չճանչցող հայ մանկավարժ-մայրն է, ու տակաւի՜ն՝ մեծ մայր, որ Կայան աւանին մէջ ինքզինք միշտ «յաղթական» կը զգայ: «Ջենք վախնար, այնքան ատեն որ կ՛ուզենք ապրիլ, որպէսզի թուրքը վախնայ մեզմէ»: Եւ Լենային համար «յաղթանակ»-ի լաւագոյն միջոցը «ապրելուն» մէջ է: Այս ապրող կեանքն է, որ տեսայ Կայան աւանին մէջ: Սահմանամերձ գիւղը:

Դպրոցին մանուկները, մեր գիտաժողովի երկրորդ օրուան աշխատանքներէն առաջ, կատարեցին ներկայացում մը: Իսկ ներկայացո՞ւմը՝ «Լոյս, սէր եւ կեանք»: Անոնք երգեցին եւ վկայեցին կեանք մը, որուն հիմքերը լոյսն ու սէրն են: Եւ այս արժանիքներով կեանք մըն է, որ անոնք վճռած են ապրիլ, բայց նաեւ վճռած են յաղթել:

Դասախօսութիւններէն ետք քիչ մը քալելով հասայ «խրամատը». հոն, ուր սահման էր եւ կարելի չէր աւելի առջեւ երթալ: Եւ այդ խրամատին մօտ կային ապրող վկայութիւններ: Հոն էր նահատակ քաջամարտիկ Գէորգին յուշարձանը: Ու տակաւին՝ հոն էր նաեւ կիսափլատակ տնակը, որուն մէջ կանգուն կեցած էին Սուսաննան եւ իր զաւակները: Բոլորն ալ տակաւին կ՛ապրին Կայան աւանին մէջ: Եթէ չկան բնակութեան յարմարաւէտ ու բարուօք պայմաններ, բայց կայ ապրելու հոգին: Այն հոգին, որ խառնուած է այդ «խրամատ»-ին մէջ: Եւ եթէ հայու այս հոգին «խրամատ»-ին կու տայ ուժ՝ պահելու եւ պահպանելու համար զայն, բայց նաեւ անկէ կ՛առնէ կեանքը ապրելու տեսլականը: Երեւի ա՞յս ալ հայուն «իւրայատկութիւններէն» է: Եւ ինչպէս որ օտար լրագրող մը անցեալ ապրիլի Ղարաբաղի պատերազմը եւ անոր ընդհանուր մթնոլորտը նկարագրելով՝ ըսած էր. «Տարօրինակ է հայը: Խաղաղ օրերուն կը ձգէ իր հայրենիքը, բայց պատերազմի ու ճգնաժամի ատեն կը վերադառնայ ու կը համախմբուի անոր շուրջ»: Երեւի մեր պատմութի՞ւնն է, եւ այդ պատմութեան ստեղծած հոլովոյթնե՞րը, որոնք հայը վերածած են «ճգնաժամի» ժողովուրդի մը:

Կայան աւանէն դուրս եկանք եւ հասանք Իջեւան: Ճաշարանի մը մէջ մեզի պատրաստած էին ընթրիք: Արմէն Կիրակոսեանը մեր սեղանին սպասարկողն էր: Երիտասարդ հայ մը, որ կ՛ապրի Իջեւանի մէջ: Ճաշի մատակարարումէն ետք Արմէնը արտասանեց Սիամանթոյի «Ջաւակը»: Եւ բանաստեղծին հոգին ու միտքը որքան դիպուկ էին այդ մթնոլորտին հետ: Եւ «Ջաւակը»: Հայրը գիշերով իր զաւակը կը հասցնէ Միջերկրականի ափերը՝ մաքառելով ահաւոր ալիքներուն դէմ, փրկելով միակ «լոյսը աւերուած իր գիւղին»: Եւ եթէ հայ ժողովուրդին պատմութիւնը մինչեւ այսօր լեցուն է «ալիքներով», սակայն ուրիշ ելք չկայ, բացի «մաքառելէ» անոնց դէմ: Դժուար թէ այլընտրանք մը ըլլայ, հայը պիտի պահէ իր միակ «լոյսը»՝ հայրենի հողը: Եւ Կայան աւանը եւ անոր «խրամատ»-ին կողքին ապրող «սահմանամերձ հայը» ցոյց տուին կեանքը ապրելու եւ շարունակելու այս վճռակամութիւնը: Թէ՝ կարելի է ապրիլ եւ պահել մեր միակ ,լոյսըե, որքան ալ ատիկա դժուար ըլլայ:




Կայան աւան: «Սահմանամերձ հայը»: Խրամատին ընդմէջէն կեանքը պահելու եւ ապրելու մարտահրաւէրը:

Եւ դարձեալ՝ Սիամանթոն եւ իր «Ջաւակը»:

Բանաստեղծը հայ ժողովուրդին հարստութիւնը տեսաւ ազգապահպանումի եւ սերունդներու շարունակականութեան մէջ: Եւ հայը, «սահմանամերձ» թէ այլ, պիտի պահէ այս «հարստութիւնը»: Ազգապահպանումի եւ սերունդներու շարունակականութեան, իմա՝ հայուն հարստութեան ամուր գրաւականը հայրենի հողն է:



Կայան աւան: «Սահմանամերձ հայը»: Ան՝ հայը, վճռած է պահել իր հայրենի հողը: Իր՝ հայուն հարստութիւնը:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

## Ծննդեան 180-ամեակ (1837-1884)

## Հիմնադիր Կեդրոնական Վարժարանի (130-ամեակ)

*ԴՈԿՏ ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ7 ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*



### Նախընթացը

*Կ.Պոլսոյ հայոց նախկին պատրիարքներէն ամենէն երիտասարդն էր Ներսէս Արքեպիսկոպոս Վարժապետեան որ նոյնպէս ամենէն երիտասարդը եղաւ անոնց եւ յաջորդներուն մէջ որ կանխահաս կնքեց իր կեանքը 47 տարիքին՝ շաքարախտի հիւանդութեան հետեւանքով: Ներսէս Պատրիարք 19-րդ դարու երկրորդ կիսուն փայլեցաւ որպէս Հայ Եկեղեցւոյ եւ Ազգին նուիրեալ ամենէն կարկառուն հոգեւորականներէն մին, ծնած Կ. Պոլիս 1837-ին, որ 25 երիտասարդ տարիքին 1862 Հոկտեմբեր 13-ին ձեռնադրուեցաւ եպիսկոպոս Կիլիկեան Աթոռի Սիսի Կիրակոս Բ. Կաթողիկոսէն որպէս Թեմակալ Առաջնորդ Ատանայի: Ան եղաւ այն բացառութիւններէն5 որոնք կանոնական դպրեվանքէ մը անցնելով հոգեւորականի յատուկ ուսում չստացան, այլ ուսուցչական ասպարէզէն բարձրացան հոգեւորական կարգի: Ներսէս Պատրիարք յաջորդեց Մկրտիչ Խրիմեան Կ. Պոլսոյ Պատրիարքին եւ մեծ ազդեցութիւն ու մասնակցութիւն բերաւ Հայոց Ազգային Սահմանադրութեան խմբագրութեան մէջ, որ 1863 Մարտ 17-ին պետական վաւերացում ստացաւ Օսմանեան Կայսրութեան Բարձր Դուռէն:*

### Առաջնորդ եւ Պատրիարք

*Որպէս Թեմակալ Առաջնորդ, Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան Կիլիկեան Աթոռի պատուիրակութեան երկու պատգամաւորներէն մին ընտրուելով, Մայր Աթոռ մեկնեցաւ մասնակցելու 1866 Թուի Սեպտեմբեր 15-ի Ազգային-Եկեղեցական Ժողովին որ Ամենայն Հայոց Կաթողիկոս պիտի ընտրէր Կ. Պոլսոյ Նախկին Պատրիարք Տ. Տ. Գէորգ Դ. Քէրէստէճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Էջմիածնէն վերադարձին Ներսէս Եպիսկոպոս Առաջնորդ ընտրուեցաւ Նիկոմիդիոյ (Իզմիր) Թեմին, եւ շուտով, երբ Մկրտիչ Խրիմեան Կ. Պոլսոյ Պատրիարք Ազգային Սահմանադրութեան հետ հաշտ չըլլալով պետութեան իր հրաժարականը կը ներկայացնէր, Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան կ'ընտրուէր Պատրիարք Կ. Պոլսոյ Հայոց, հակառակ իր խնդրանքին որ իր անունը վերցնեն թեկնածուներու ցանկէն՝ առողջական պատճառներով: Ներսէս Եպիսկոպոս կանուխէն կը տա-*

*Պատրիարքութիւնը չայտնելով իրենց ուրախութիւնն ու շնորհաւորութիւնները, Ներսէս Պատրիարք կը ձեռնարկէր իր գործին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ. Մայր Աթոռէն զինք կ'ողջունէր որպէս «իր աջ բազուկը»: Կիլիկեան Աթոռի միաբան եպիսկոպոս ըլլալուն, Մայր Աթոռ հարկ էր երթալ ու դառնալ միաբան Մայր Աթոռի, որուն նկատմամբ Գէորգ Դ. Կաթողիկոս խիստ ընթացք որդեգրած էր որ նման պարագաներու Մայր Աթոռէն դուրս ձեռնադրուած եպիսկոպոսներ, եթէ Մայր Աթոռի Թեմերուն մէջ պիտի ծառայէին, իրենց ուխտը կատարէին Իջման Սեղանին առջեւ, ստանալով եմիփորոն, մատանի եւ խոյր՝ իր հաստատած «Կանոն Վաւերացուցանելոյ» արարողակարգին համաձայն որ իրմէ ետք աւելորդ եւ անգործադրելի նկատուեցաւ:*

### Անմիջական Գործեր

*Այս բոլորով հանդերձ, կարեւոր եւ անյետաձգելի անմիջական գործեր, տնտեսական ու վարչական խնդիրներ, կը սպասէին նորընտիր Պատրիարքին, որոնց մէջ կար Պատրիարքարանին յետնեալ պարտքերը: Անոնց համար բարերարներ պիտի գտնէր, իսկ միւս կողմէ կար Աղթամարի Կաթողիկոսութեան խնդիրը՝ Խաչատուր Շիրոյեան Կաթողիկոսի անձին դէմ կատարուած ամբաստանութեամբ:*

*Հակառակ իր վատառողջ վիճակին, Ներսէս Պատրիարք յաջողեցաւ տագնապները լուծել, նախ երկու բարերարներ գտնելով, մին Եգիպտոսէն՝ Աբրահամ Երամեան, եւ միւսը Պոլսէն՝ ճարտարապետ Սարգիս Պալեան, որոնք մեծ գումարներ յատկացուցին Պատրիարքութեան, թեթեւցնելով անոր տնտեսական ծանր կացութիւնը: Իսկ Աղթամարի պարագային քննելով զայն Պատրիարքարանի Ազգային Ժողովին կողմէ, ջնջել կուտար Շիրոյեանի դէմ եղած անտեղի ամբաստանութիւնը եւ առ այդ պետութեան կը տեղեկացնէր անհրաժեշտ դիմումը:*

*Աղթամար նոյնիսկ չէր ճանչցուէր Մայր Աթոռէն, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ. խիստ վերաբերմունք ցոյց կուտար անոր նկատմամբ ու կը պահանջէր*

*Շար.ը էջ 19*

Գրաւուած Թուական

Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 18, 2016




Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938

## ՊՈԼՍԱՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԱՐԱ ԿԻՒԼԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ



Պոլսահայ նշանաւոր լուսանկարիչ Արա Կիւլերի գործն ու կեանքը յաւերժացնող թանգարանի մը բացումը տեղի պիտի ունենայ մօտ ատենէն: Պէյօղլու շրջանին մէջ բացուելիք թանգարանին մէջ պիտի ցուցադրուին անուանի լուսանկարիչին գործերը, նոթագրութիւնները եւ անոր ստացած մրցանակներն ու պատուոյ նշանները: Այս ծրագիրի գործադրութիւնն ստանձնած է «Տողուշ» առեւտրական խմբակը:

Արա Կիւլէրի ներկայութեամբ օրերս կնքուած այս համաձայնութեան կնքումին ներկայ եղած են «Տողուշ» ընկերութեան գործադիր պատասխանատուներ՝ Ֆէրիտ Շահենք եւ Հիւսնի Աքհան:

Վերոյիշեալ թանգարանը ի մի պիտի բերէ Արա Կիւլէրի կեանքին ու արուեստին հետ կապուած բոլոր իրեղէնները ու պիտի հանդիսանայ Իսթանպուլի արուեստի ամենէն կարեւոր կեդրոններէն մին:

## ԿՐԱՍՆՈՏԱՐԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 30 ԹՈՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՂՐԿԵՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ

Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ կատարուած չորս օրուան անարգ յարձակումէն անմիջապէս ետք Կրասնոտար (Ռուսաստան) 900,000 հաշուող հայ գաղութը շտապեց օգնութեան ձեռք երկարել Հայաստանին եւ Արցախին: Արդարեւ ցուցաբերուած օգնու-թիւնը շուրջ 30 թոն, եղած է սննդամթերքի եւ կենցաղային ապրանքներու ձեւով, ինչպէս նաեւ շտապ օգնութեան ինքնաշարժ մը եւ սաւնարաններ, որոնք յանձնուած են Մուրացանի անուան զինուորական հիւանդանոցին:

Նշենք նաեւ որ Կրասնոտարի շրջանին մէջ կը գործեն հայկական 45 համայնքային կազմակերպութիւններ, որոնք նմանօրինակ նախաձեռնութիւններ կատարելով իրենց հոգիին եւ խիղճին առջեւ հանգիստ կը զգան, քանի որ «մենք մէկ ազգ եւ մէկ ամբողջութիւն ենք» յայտնեց Դրամահաւաքի պատասխանատուներէն Ռազմիկ Գէորգեան:

## ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՕՆԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ



Կիրակի 3 Յուլիս 2016-ին, Դամասկոսի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ մէջ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին առթիւ, հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատուցեց եւ քարոզեց Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Ս. Եպս. Նալպանտեանը:

Սուրբ խորանին կը սպասարկէր Տ. Տրդատ Քհնյ. Քիրէճեանը: Այս մասին կը հաղորդէ Դամասկոսի Ազգ. առաջնորդարանի դիւանը:

Սրբազան Հայրը իր քարոզին մէջ հաւատացեալ ժողովուրդին փոխանցեց Պայծառակերպութեան խորհուրդը եւ անոր հետ առընչուած ազգային հնամենի աւանդոյթները: Յաւարտ Սուրբ Պատարագի Սրբազան Հայրը վարդաջուր սրսկեց հաւատացեալներուն վրայ:

www.massisweekly.com

## ԿԵԱՒՈՒՐ ԹԱՂԻՆ ՄԷՋ ԿԵԱՒՈՒՐ ՉԷՐ ՄՆԱՑԱԾ, ՀԻՄԱ ԹԱՂԱՄԱՍՆ ԱԼ ՉՄՆԱՑ



Երբ 2015 թուականի Դեկտեմբեր 2-ին Տիարպեքիրի Սուր գաւառին մէջ յայտարարուած փողոց ելլելու արգելքը վերջերս մասամբ վերացուեցաւ, սկսան ի յայտ գալ Սուրի կրած վնասներուն չափերը:

Սուր գաւառին մէջ գտնուող Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ մէջ կատարուած ուսումնասիրութիւնները բացայայտեցին, որ վնասուած է եկեղեցւոյ ոչ այնքան դուրսի, այլ՝ ներսի կողմը, որը 6 ամիս ոչ ոք կրնար տեսնել՝ բախումներու թատերաբեմին մէջ գտնուելուն պատճառով:

Տիարպեքիրի մէջ մարդու իրաւունքներու պաշտպանները եկեղեցին այցելելէ ետք յայտնած են, որ եկեղեցւոյ պատերը, տանիքը եւ զանգակատունը լուրջ վնասներ չեն կրած:

Սակայն, միւս կողմէ, անոնք արձանագրած են, որ եկեղեցւոյ բոլոր ապակիները կոտրուած են, անիկա օգտագործուած է որպէս ռազմակայան, նստարանները պատուհաններուն յենելով՝ պատնէշներ ստեղծած են, մէջը վառարան սարքած են, ուր այրած են որոշ նստարաններ, իսկ եկեղեցիին մէջը՝ աղբանոցի վերածած:

Մարդու իրաւունքներու պաշտպանները նշելով, թէ յատկապէս մեծ աւերածութեան ենթարկուած է Սուրբ Կիրակոսի այգիին մէջ գտնուող փոքր եկեղեցին, նաեւ յայտնած են. «Թալանուած է եկեղեցւոյ գրասենեակը, կողոպտուած՝ վաճառելու նպատակով այստեղ գտնուող գիրքերը, ինչպէս նաեւ՝ նուէրները: «Քահանայատուն» անուանուող ներքեւի յարկին վրայ բացուած է մեծ անցք մը, որմէ կապ հաստատուած է Սուրբ Կիրակոսի կողքին գտնուող քաղդէական եկեղեցւոյ հետ»:

Մարդու իրաւունքներու պաշտպանները նաեւ ընդգծած են, որ մեծ չափով աւերածութեան ենթարկուած է նաեւ այն փողոցը, ուր կը գտնուի Սուրբ Կիրակոս եկեղեցին:

Անոնք յայտնելով, որ այստեղի բոլոր խանութներն ու տուները քանդուած են, առաջ նեղլիկ եղած այդ փողոցը այժմ ամբողջովին դատարկ է եւ վերածուած է բաց տարածքի մը, նաեւ շեշտած են, թէ Սուրբ Կիրակոս եկեղեցիին եւ քաղդէա կան եկեղեցիին պատկանած շուրջ 25 խանութները եւս գետնին հաւասարեցուցած են:

Մարդու իրաւունքներու պաշտպանները յայտարարած են. «Յատկապէս Մկրտիչ Մարկոսեանի փողոցը այլեւս հարթ տարածք է, որմէ նոյնիսկ Մարտինքափըն կ'երեւի: Կեաւուր թաղը այլեւս ամբողջովին դատարկ է եւ մեծ տարածք: Խճա քարերը հաւաքուած են, բայց Եօղուրթփազար փողոցին մէջ տուները դեռ կանգուն են: Կեաւուր թաղին մէջ կեաւուր չէր մնացած, հիմա թաղամասն ալ չմնաց»,- «Ակօս»-ին կը գրէ Նազան Օզճանը:



## ՏԱՍԸ ԵՐԵՒՈՅԹ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՊԷՏՔ Է ՄԻՇՏ ՅԻՇԵԼ

*Ամբողջ կեանքի ընթացքին կը սպասես մէկուն, որ կը հանդիպի եւ կ'ընդունի քեզ այնպէս, ինչպէս որ ես, բայց յետոյ կը հասկնաս, որ դուն երբեք ալ առանձին չես եղած, քանի որ դուն քեզի ունիս: Քու կեանքդ ՔՈՒ ձեռքերուդ մէջ է եւ ՈՉ ՄԷԿԸ կրնայ երջանկութիւն պարգեւել քեզի: Այս հարցով քեզի կ'օգնեն հետեւեալ տասը խորհուրդները:*

*80/20-ի օրէնքը*

*Փարէթոյի կամ 80/20-ի օրէնքը կը նշանակէ՝ 20% ջանք եւ 80% արդիւնք, իսկ ուժերու մնացած 80%-ը կու տան 20%-ի արդիւնք: Օրինակ՝ պարտադիր չէ մառանը կամ նկուղը ամէն օր մաքրել, քանի որ անոնք այնքան ալ յաճախ չեն օգտագործուիր, իսկ խոհանոցը կամ լոգարանը ամէնօրեայ մաքրութեան պէտք ունին: Այսպիսով, ձեր բնակարանին մէջ սենեակներու 20%-ը կը պահանջեն ձեր ուշադրութեան եւ ջանքերուն 80%-ը:*

*Այս պարագային տունը մաքրելու խնդիրը աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծուի: Կեդրոնացիր եւ ժամանակը ծախսէ արդիւնաւէտ գործերու վրայ:*

*Փարքինսընի օրէնք*

*Համաձայն Փարքինսընի օրէնքին՝ աշխատանքը կը սպառէ անոր կատարման յատկացուած ամբողջ ժամանակը: Այսինքն՝ եթէ գործատուն մը կը յանձնարարէ մէկ ամսուան մէջ կատարել աշխատանք մը, որ կարելի է աւարտին հասցնել մէկ շաբթուան մէջ, ապա աշխատողը անպայման անիկա կ'ընէ մէկ ամսուան մէջ՝ դժուարացնելով եւ երկարացնելով աշխատանքը կատարելու գործընթացը: Ան չի կեդրոնանար էական եւ հիմնական խնդիրի լուծման վրայ եւ ժամանակը արդիւնաւէտ ձեւով չ'օգտագործեր: Իսկ եթէ սահմանուած ժամկէտը ըլլայ մէկ շաբաթ, ան պիտի կեդրոնանայ իր գործին վրայ եւ արդիւնաւէտ ձեւով պիտի կատարէ զայն: Այսինքն՝ պէտք է աւելի արագ գործել:*

*Տալ, իսկ յետոյ ակնկալել՝*

*Ասիկա ճիշդ հերթականութիւնն է: Սկիզբը պէտք է տալ, իսկ յետոյ ակնկալել, քանի որ միայն այսպէս դուն կը ստանաս այն, զոր կը փափաքէիր եւ կ'երազէիր: Յիշէ, աշխարհի վրայ ամէն վայրկեան կ'իրականանայ ոեւէ մէկուն երազանքը: Վաղը հաւանաբար քուկդ կատարուի: Ոչ մէկը երբեք իր տուածէն աւելին չէ ստացած:*

*Սխալներ եւ անյաջողութիւններ՝*

*Անոնք անգնահատելի փորձ կրնան ըլլալ քեզի համար: Անյաջողութիւնները կրնան խթան դառնալ յաջողութեան ճանապարհին: Սխալներէն պէտք չէ հիասթափուիլ, անոնք երբեմն կրնան դրական ազդեցութիւն ունենալ կեանքիդ վրայ:*

*Ծանօթացիր եւ ազատօրէն շփուիր նոր մարդոց հետ՝*

*Իւրաքանչիւր հանդիպում պատմութիւն մըն է եւ անոր պէտք է լուրջ վերաբերիլ: Եթէ անծանօթ մարդոց հետ կը շփուիս այնպէս, ինչպէս մտերիմներուդ, ուրեմն աւելի ինքնավստահ, աւելի անկեղծ մարդու տպաւորութիւն կը ձգես եւ դրականօրէն կ'ազդես դիմացինիդ վրայ:*

*Լաւատեսութիւնը կրնայ փոխել իրականութիւնը՝*

*Յոռետեսութիւնը կը թաքնուի իրականութեան դիմակին տակ եւ միայն լաւատեսութեամբ կրնաս փոխել զայն:*

*Երախտագիտութիւն՝ պարզ միջոց երջանիկ զգալու համար՝*

*Հիանալի միջոց շրջապատի հետ լաւ յարաբերութիւններ հաստատելու, անոնց ուրախութիւն պարգեւելու եւ ինչու ոչ, երջանկանալու համար. չէ որ երջանկութեան զգացումը վարակիչ է:*

*Մի համեմատեր քեզ ուրիշներու հետ Եթէ դուն քեզ կը համեմատես ուրիշներու հետ, ուրեմն կ'արտօնես, որ արտաքին աշխարհը ղեկավարէ քեզ: Իբրեւ արդիւնք տրամադրութեան անկումը անխուսափելի է: Աւելի ճիշդ եւ արդիւնաւէտ պիտի ըլլայ, եթէ համեմատես նոյնինքն դուն քեզ հետ, որպէսզի տեսնես, թէ որքան աճած ես, զարգացած եւ ինչ նուաճումներ արձանագրած ես:*

*Վախի աչքերը շատ մեծ են՝*

*Վախերուդ 80-90%-ը երբեք տեղի չ'ունենար: Անոնք միայն կը ծնին եւ կ'ապրին գլխուդ մէջ: Անհանգստութիւնը ժամանակի եւ ուժի անիմաստ կորուստ է:*

*Ամէն ինչին շատ լուրջ ձեւով մի վերաբերիր՝*

*Այսօրուան խնդիրներէն շատերը վաղը նոյնիսկ պիտի չյիշես: Եթէ զգացումներուն եւ միտքերուն շատ լուրջ կը վերաբերիս, կը սպառես ուժերդ: Մտածէ միայն դրական երեւոյթներու մասին:*

## ԵՐԿԱՐԱՏԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

*Մտածա՞ծ էք բնաւ, թէ ինչո՞ւ որոշ զոյգերու սէրը տարիներու ընթացքին աւելի կ'ամրապնդուի, իսկ ուրիշներ յաճախակի տարաձայնութիւններ կ'ունենան: Որոնք են երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքները.*

*1.Հաւատարմութիւն. Իրական յարաբերութիւններու հիմքը հաւատարմութիւնն է, որ ամուսնութեան եւ սիրոյ գրաւականն է: Հաւատարիմ մարդոց համար փոխադարձ վստահութիւնն ու նուիրուածութիւնը աւելի կարեւոր է, քան տարաձայնութիւններն ու նման այլ մանրուքները:*

*2. Շփում. Երկարատեւ յարաբերութիւններ հաստատելու հարցով շփումը մեծ դեր ունի: Պէտք է մոռնալ բոլոր տեսակի էլէկտրոնային սարքերու մասին եւ հանգիստ խօսակցիլ: Անկեղծ շփումը յարաբերութիւններու մէջ վստահութեան եւ երջանկութեան հիմքն է: Եթէ շփում չկայ, զոյգերը չեն կրնար երկար ապրիլ իրարու հետ:*

*3. Կայունութիւն. Արիստոտէլ ըսած է. «Մենք մեր մշտապէս կատարուող գործերն ենք: Ուստի, կատարելութիւնը ոչ թէ գործողութիւն, այլ՝ սովորութիւն է»: Ճիշդ եւ երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքը կայունութիւնն է: Եթէ ամուսինները իրենց զուգընկերոջ հետաքրքրութիւնները սեփականնէն վեր կը դասեն եւ կը փորձեն իրենց ներդրումը ունենալ յարաբերութիւններու կայունութեան մէջ, ուրեմն անոնց սէրը յարատեւ պիտի ըլլայ եւ ժամանակի ընթացքին անիկա միայն պիտի ամրապնդուի:*

## ՎԵՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԿԱՊՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

*Եթէ կը կասկածիք՝ արդեօք իսկապէս կը սիրէք ձեր ընտրեալը, թէ կապուածութիւն կը զգաք անոր նկատմամբ, ուրեմն ուշադիր կարդացէք այս վեց կէտերը: Անոնք կ'օգնեն ստանալու ձեզ տանջող հարցին պատասխանը:*

*-Սէրը կիրք է, իսկ կապուածութիւնը՝ անտարբերութիւն.*

*Այստեղ խօսքը բաժանման ժամանակ զոյգերու պահուածքին մասին է:*

*Կ'ըսեն՝ սիրելէն ատելութիւն մէկ քայլ է. ուստի, սիրող զոյգերու պարագային բաժանման ժամանակ սիրոյ գեղեցիկ զգացումը կը վերածուի ատելութեան: Իսկ եթէ զոյգերու միջեւ կապուածութիւն է, ուրեմն բաժնուելու պահուն անոնք անտարբեր պիտի ըլլան եւ անգամ չզայրանան:*

*-Սէրը անվերապահ է, իսկ կապուածութիւնը՝ եսասիրական. Սիրող զոյգերը անվերապահօրէն կը նուիրուին իրարու: Զոյգերէն ամէն մէկուն համար միւսին պահանջներն ու ցանկութիւնները սեփականնէն վեր կը դասուին: Իսկ կապուածութեան ժամանակ զոյգերը եսասիրական մօտեցում կը ցուցաբերեն իրարու հանդէպ:*

*-Սէրը բարդ է, իսկ կապուածութիւնը բարդ է, երբ միասին էք. Իրական սիրոյ պարագային ամէն ինչ շատ դժուար է: Կը թուի՝ ամէն ինչ պէտք է գեղեցիկ ու պարզ ըլլայ, բայց կեանքը իր օրէնքները կը թելադրէ, եւ սիրող զոյգերը պէտք է մշտապէս պայքարին իրարու կողքին ըլլալու համար: Իսկ կապուածութեան պարագային զոյգերը պարզապէս կը մտածեն, թէ շաբաթը քանի անգամ պիտի հանդիպին: Այս պարագային յարաբերութիւնները չեն զարգանար եւ թմրանիւթի նման՝ ազդեցութիւնը վաղ թէ ուշ կ'անցնի:*

*-Սէրը ազատութիւն է, իսկ կապուածութիւնը՝ բանտարկութիւն. Երբ դուք կը սիրէք, չէք մտածեր սիրած էակը մշտապէս ձեր տեսադաշտին մէջ պահելու մասին: Պէտք չկայ զգացումները հասկնալու համար ամէն վայրկեան իրարու հետ ըլլալ:*

*Իսկ երբ զոյգերը կապուած են իրարու, իրական սիրոյ զգացում չկայ, քանի որ անոնք այդ սէրը կը զգան միայն իրարու ներկայութեան պարագային:*

*-Սէրը կ'ընդլայնէ սահմանները, իսկ կապուածութիւնը՝ կը սահմանափակէ: Իրական սէրէն բացի, ոչինչ այս աշխարհի վրայ չի կրնար ամենազօրութեան զգացում յառաջացնել զոյգերուն մօտ: Սէրը նոր շունչ եւ ուժ կու տայ ձեզի, եւ դուք պատրաստ էք գրաւելու ամբողջ աշխարհը:*

*Իսկ կապուածութեան պարագային սէրը կը վերածուի իշխանութեան համար պայքարի: Զոյգերէն ամէն մէկը կ'ուզէ հաւաստիանալ, որ յարաբերութիւններու «ղեկ»-ը իր ձեռքն է:*

*-Սէրը յաւերժ է, իսկ կապուածութիւնը՝ ժամանակաւոր. Երբ դուք իսկապէս կը սիրէք, ուրեմն ձեր սէրը յաւերժ է: Նոյնիսկ եթէ յարաբերութիւնները այլ ընթացք կը ստանան, եւ զոյգը կը բաժնուի, միեւնոյնն է, ան կը մնայ ձեր կեանքի միակ սէրը: Իսկ կապուածութեան պարագային զոյգերը նման զգացումներ չեն ապրիր: Անոնց կապուածութիւնը ժամանակաւոր է, իսկ յարաբերութիւնները՝ կեղծ:*

## ԻՆՉՊԷՍ ՄԵԾՑՆԵԼ ԿԱՄՔԻ ՈՒԺԸ

*Թէեւ շատերը կը կարծեն, որ կամքի ուժը բնածին տրուած երեւոյթ է՝ հոգեբանները կը պնդեն, որ անիկա կարելի է աւելի մեծցնել ու աւելի կամային դառնալ: Այսպիսով, ինչ պէտք է ընել կամքի ուժը «մարզելու» համար:*

*Մտախոհութիւն* (meditation)*՝*

*Մտախոհութիւնը որոշ մարդոց համար հաւանաբար կը թուի բաւական ձանձրալի եւ անիմաստ զբաղմունք, բայց անիկա կրնայ օգնել ձեզի կամքի ուժը մեծցնելու հարցով:*

*Մտախոհութեան առաջին օրերուն, ձեր գիտակցութիւնը պիտի փորձէ խանգարել եւ ստիպել ձեզի յանձնուիլ: Սակայն դուք կրնաք վերահսկել ձեր մտքերն ու ստիպել գիտակցութեան լռել: Ընդունեցէք մտախոհութեան դիրքը եւ խոր շնչեցէք ու արտաշնչեցէք: Քանի մը օր անց դուք պիտի նկատէք, որ դուք աւելի դիւրութեամբ կը կեդրոնանաք ձեր խնդիրներուն վրայ եւ չէք շեղիր:*

*Հետեւեցէք ձեր կեցուածքին՝*

*Գիտնականները ապացուցած են, որ աւելի կամային դառնալու համար պէտք է ուղղել կեցուածքը: Ուսումնասիրութիւններուն մասնակցած կամաւորները, երկու շաբաթ հետեւելով իրենց կեցուածքին, դարձած են աւելի կամային, որ պարզ դարձած է յատուկ փորձարկումներու միջոցով: Ուստի, մշտապէս ուղղեցէք կեցուածքը:*

*Սննդականոն՝*

*Կամքի ուժին վրայ դրական ազդեցութիւն կրնայ ունենալ նաեւ յստակ սննդականոնը: Պարզապէս պէտք է ճիշդ ժամանակին ուտել եւ երբեք չշեղիլ սահմանուած վարչաձեւէն:*

*Հետեւեցէք ձեր խօսքին՝*

*Ասիկա կամքի ուժը փորձելու եւ զայն աւելի ամրացնելու հիանալի միջոց է: Պէտք է հետեւիլ ձեր խօսքին եւ փորձել ճիշդ, պարզ, լակոնիկ, հոմանիշներով հարուստ խօսք օգտագործել:*

*Այսինքն՝ աւելի գեղեցիկ խօսիլ: Մէկ ամիս անց գրագէտ խօսքը ձեզի համար այլեւս ոչ մէկ դժուարութիւն չի յառաջացներ:*

*Յստակ նպատակներ՝*

*Ձեր չիրականացած ծրագիրները բացասական հետեւանքներ կրնան ունենալ ձեր կամքի ուժին վրայ: Սակայն յուսահատելէ առաջ պէտք է հասկնալ, թէ որքան իրական էին այդ նպատակները, որքան միջոց, ուժ եւ եռանդ ներդրած էք անոնց իրականացման հարցով: Բայց այս ամէնէն խուսափելու համար պէտք է յստակ եւ ճիշդ նպատակներ ունենալ:*

*Մարզուիլ՝*

*Գաղտնիք չէ, որ մարզաձեւի մը հետեւիլն ու մարզումները աւելի կամային կը դարձնեն մարդը: Հետեւաբար, եթէ կը փափաքիք «մարզել» կամքի ուժը, քանի մը ամիս գացէք մարզուելու: Այնուհետեւ ատիկա սովորութիւն պիտի դառնայ ձեզի համար եւ դուք նոյն եռանդով պիտի շարունակէք:*

*Ուշադրութիւն դարձուցէք ձեր շրջապատին Եթէ կը փափաքիք վերահսկել ձեր կամքի ուժը, պէտք է նաեւ ուշադրութիւն դարձնէք ձեզ:*

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Հրահանգել շատ սիրելուդ՝ շուրջիններդ կը հեռանան քեզմէ: Տարակուսանքի մէջ ես անհիմն պատճառներով: Պտոյտ մը ծրագրելու յարմար առիթը պիտի ունենաս:
Բախտաւոր թիւերդ են 6,13,17,27,29

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Կարծիքներու փոխանակման ընթացքին պիտի վիճիս բարեկամիդ հետ: Մարզական հանդէսի մը ներկայ պիտի ըլլաս: Գործդ բաւական պիտի յառաջանայ:
Բախտաւոր թիւերդ են: 10,14,26,31,35

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Տարեց մը քեզի շատ նեղութիւն կը պատճառէ իր անտեղի նիւթերով: Համբերատար եղիր: Անկարելիին համար մի յոգնիր, փորձէ իրատես ըլլալ:
Բախտաւոր թիւերդ են: 1,19,21,25,33

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Շատ լաւ ձիրքերով օժտուած անձ մըն ես, սակայն կը ծուլանաս զանոնք օգտագործելու: Կորսուած եւ հեռացած ազգական մը անակնկալի պիտի բերէ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 5,15,24,32,35

**ԱՌԻՒԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Ընտանիքիդ հոգածութիւնը առաջնակարգ տեղ կը գրաւէ կեանքէդ ներս: Գործիդ մէջ անձ մը պիտի վիրաւորէ քեզ եւ անիրաւութեամբ զրպարտէ քեզ:
Բախտաւոր թիւերդ են: 8,16,22,32,34

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Տանդ մթնոլորտը ճնշում եւ նեղութիւն պիտի բանեցնէ վրադ, քաջութեամբ պիտի յաղթահարես զանոնք: Անակնկալ այցելութիւն մը պիտի ուրախացնէ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 3,9,22,30,34

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Կողակիցիդ տուած խոստումդ կատարելու մի զլանար: Հրաւէրներուդ յարմարագոյնը ձեւով ընդառաջէ: Վէճէրէ հեռու մնացիր:
Բախտաւոր թիւերդ են: 7,18,23,28,32

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Քեզմէ նեղուած եւ հեռացած անձ մը պիտի փորձէ բարեկամութիւնը վերահաստատել քու հետդ: Զգուշացիր կրնայ օգտագործել բարի սիրտդ:
Բախտաւոր թիւերդ են: 2,7,16,23,33

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Գաղտնիքներդ եւ անձնական կեանքիդ մանրամասնութիւնները մարդու հետ խօսիլ չես սիրեր: Հանրային վայրեր երթալէ զգուշացիր այս շաբաթ:
Բախտաւոր թիւերդ են: 14,23,25,29,30

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Ընտանիքիդ անդամները համախմբելով կը սիրես լաւ ժամանակ անցընել անոնց հետ: Մի փորձէր ուրիշին նմանիլ: Շատ ազնիւ եւ ծառայասէր ես:
Բախտաւոր թիւերդ են: 4,9,17,26,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Զաւակներուդ հետ շատ ժամանակ կ'անցընես եւ կը սիրես զիրենք խրատել: Բարեկամներդ յաճախ կ'ուզեն այցելել քեզ անկեղծութեանդ համար:
Բախտաւոար թիւերդ են: 5,17,23,34,35

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Քանի մը նիւթեր կան, որոնք կը մտահոգեն քեզ, ակայն անոնց մասին խօսիլ չես սիրեր: Հարազատներդ մի մոռնար երբ նոր անձերու կը ծանօթանաս: 3,14,21,28,31

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## «Քոստ Երկիրն» Ու

*Շարունակուածէջ 2-էն*

*խելու, ընտրութիւններից առաջ անհրաժեշտ գումար «հայթայթելու» խնդիր է դրուած:*

*Գուցէ, հերթը Գագիկ Խաչատրեանինն է, նա արել է իր գործը, այժմ նրանից կարողութիւններ խլելու ու մի նոր «մուտանտ» աճեցնելու խնդիր է դրուած, ինչով, ընդհանուր առմամբ, զբաղուած է իշխանութիւնը տարիներ շարունակ՝ գերհարստացնել, ապա, եթէ անհրաժեշտ է՝ «յօշոտել»:*

*Մինչ այժմ իշխանութիւնը որեւէ բացատրութիւն չի տուել, թէ որտեղից Գագիկ Խաչատրեանին նման հսկայական կարողութիւններ: Պարզ է, որ օրինական ճանապարհով անհնար է այս չափերի հարստութիւն դիզել: Պարզ է նաեւ, որ առանց իշխանութեան իմացութեան՝ անհնար էր, որ Գագիկ Խաչատրեանն այսքան հարստութիւն ձեռք բերէր:*

*Սա Հայաստանի անվտանգութեան սպառնացող երեւոյթ է: Կոռուպցիան եւ թալանն արդէն սպառնում է երկրի անվտանգութեանը, իսկ այս երեւոյթները դէմն առնելու համար պէտք է կոնկրետ երկրի ազգային անվտանգութիւնը գործի անցնի: Մինչդեռ պատկան մարմինները եւ բարձրագոյն իշխանութիւնը, լռում է...*

*Ինչու՞...*

*Առհասարակ, եթէ փորձում ես փոքր-ինչ տրամաբանել, հետաքրքիր հարցեր են առաջ գալիս: Որտեղի՞ց, իշխանութեան ծառաների բնորոշած՝ «քոստ երկրում» այսքան գումարներ... Որքան էլ բոլոր ոլորտներում ու բնագաւառներում մենաշնորհային դիրք լինի, որքան էլ Հայաստանը թանկ երկիր լինի՝ ի համեմատութիւն, օրինակ, հարեւան Վրաստանի եւ աշխարհի այլ աւելի զարգացած ու հարուստ երկրների, միեւնոյն է, չեն կարող այսպիսի հսկայական կարողութիւններ ու գումարներ շրջանառուել փոքր ու աղքատ Հայաստանում: Նոյնիսկ համատարած կաշառակերութեան, համատարած թալանից եկող գումարները հազիւ թէ միլիոնների շրջանառման հասնեն:*

*Որտեղի՞ց այսքան գումար «քոստ» երկրում, ի՞նչ մութ գործարքներ են տեղի ունենում մեր երկրի միջոցով ու իշխանութիւնների ձեռքով՝ զէնքի՞, թմրամիջոցների՞ վաճառքի, թէ՞ այլ մութ գործարքների միջոցով են կուտակւում գումարներ: Ո՛չ «օրինականացուած» ու համակարգուած թալանի, ո՛չ կաշառակերութեան ու մենաշնորհների միջոցով այսքան միլիոններ չեն կարող շրջանառուել ու այսպիսի հսկայական կարողութիւնների տէր չեն կարող դառնալ թէկուզ մի քանի տասնեակ ընտանիքներն ու նրանց հարազատները:*

*Ինչ-որ բան այն չէ մեր երկրում, աննորմալ հարստութիւնները դիզելու հիմքերն, ամենայն հաւանականութեամբ, այլ տեղ են թաքնուած:*

*«ՀԱՅԵԼԻ»*

## ՄՈՒՍՈՒԼԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԽՈՒՐ ՕՐԻՆԱԿԸ

*Շարունակուածէջ 6-էն*

*երեք դաշնային տարածքներ պիտի ըլլան ու անոնք պիտի բաժնուին՝ սիւննիներու, շիիներու եւ քիւրտերու միջեւ:*

*Այս բաժանումներուն մէջ առհասարակ քրիստոնեաներու, եզիտիներու, ասորիներու, զաղթէացիներու, մարոնիներու եւ հայերու հաշիւ չի կատարուիր: Ու այս բոլորէն անդին բնական է, որ փոքրամասնութիւնները իրենք զիրենք անպաշտպան զգալով պիտի ուզեն վայրկեան առաջ հեռանալ այդ շրջաններէն:*

*Հայութիւնը մեծապէս տուժեց Իրաքի մէջ: Տնտեսական մեծ կարողութիւններ ունեցող այդ համայնքը այսօր կը կոտտայ ցաւին ու տառապանքին առջեւ: Մտահոգիչ է նաեւ, որ հայութիւնը իր տարբեր թեւերով եւ քաղաքական ու ազգային բաժանումներով իրաքահայութեան համար լուրջ եւ երկարաժամկէտ ծրագիրներ չունեցաւ: Հազարաւոր իրաքահայեր, որոնք պատերազմի ամենէն թէժ օրերուն ստիպուած եղան Երեւան հաստատուիլ, այսօր չդիմանալով Հայաստանի տնտեսական դժուարին պայմաններուն՝ հեռացան ու հասան հեռու ափեր:*

*Իրաքահայութեան ապրած ողբերգութիւնը դաս չեղաւ հայութեան: Այսօր նոյն ճակատագրին կրնան ենթարկուիլ սուրիահայերը, որոնք տարբեր (յաճախ համոզիչ եւ յաճախ անտեղի) պատճառներով նոյնպէս կը հեռանան Հայաստանէն:*

*Միջին Արեւելքի արիւնով գծուող քարտէսներուն մէջ հայութիւնը վճարեց թանկ գին: Հայութիւնը Միջին Արեւելքի մէջ նօսրացաւ: Սա յոռետեսական մօտեցում մը չէ, այլ տուեալներու վրայ հիմնուած խօսք: Ու այս բոլորին դիմաց համահայկական ծրագրի մը բացակայութիւնը աւելի վտանգաւոր կը դարձնէ ընդհանուր տեսարանը:*

*Միջին Արեւելքի հայութեան ապագային մասին մտածելը միայն քարոզախօսական կամ դրամական օժանդակութիւններով չ'ըլլար, այլ համոզիչ, ապահով եւ երկարաժամկէտ ծրագիրներով: Ներկայիս ծրագրի մասին խօսողներ չկան ու պարզ է, որ այսօրուան ընդհանուր պատկերը կրնայ վաղը շատ աւելի մոխրագոյն եւ անյոյս ըլլալ:*

**Director of Fellowship Ministry Position**

**"St. Gregory Armenian Church of Pasadena is looking for applicants for a full-time position as Director of Fellowship Ministry. It requires organizing committees and teams of volunteers to plan, develop and execute parish activities. For more information, please call the parish office at 626-449-1523."**

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԼՈՒՍԻՆ ԷՔՄԷՔՃԵԱՆ-ՃԷՊԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

*Լուսին Ճէպէճեան-Էքմէքճեանի մահուան տխուր առիթով հանգուցեալի հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, գրութեամբ, փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին, ամոքելով սգակիրներու վիշտը: Մասնաւոր շնորհակալութիւն Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպազեանին, Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Յակոբեանին եւ բարեշնորհ Ստեփան Աւ. Սրկ. Յովակիմեանին:*

*Այս առթիւ հանգուցեալի դուստրը Մատլէն Էքմէքճեան եւ հարազատները սրտաբուխ հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն՝*

*Ս.Դ.Հ.Կ. Փարամազ Մասնաճիւղին $100*
*Ս.Դ.Հ.Կ. Սապահ Գիւլ մասնաճուղին $100*
*«Կայծ» Երիտասարդաց Միութեան $100*
*Հայ Մարմնամարզական Միութեան $100*
*Նոր Սերունդ Մշակութային Միութեան $100*
*«Մասիս» շաբաթաթերթին $500*

## ՄԱՇՏՈՑ ԳՈԼԷՃԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 13-էն*

*բարձր գնահատեց Գոլէճի որակաւոր ուսման մակարդակը, դասախօսական կազմի նուիրումը եւ Գոլէճի մէջ ոչ թէ միայն ուսում ստանալու, այլ նաեւ ազգային կառոյցներու մասնակցութիւն բերելու պատրաստութիւնը:*

*Ան շնորհաւորեց Գոլէճի Նախագահին 40–ամեայ ծառայութիւնը վարչագիտական մարզէն ներս:*

*«Տարուան Մայրը» պատիւին արժանացաւ Մաշտոց Գոլէճի Տիկնանց միութեան անդամուհիներէն Տիկ. Իրմա Ագրեան:*

*Երեկոն խանդավառեց յայտնի երգիչ Խաչիկ Ջէնեանը:*

*Ներկաները դժուար բաժնուեցան սրահէն, բայց շրջանաւարտները միացան Մաշտոց Գոլէճի շրջանաւարտներու միութեան:*

*Առ ի գիտութիւն Մաշտոց Գոլէճը ցարդ տուած է 6547 շրջանաւարտ, տարբեր մասնագիտութեանց մէջ: Հաստատելով նոր մրցանիշ մը կ՛ըսենք, որ Գոլէճի շրջանա-ւարտներու 97 տոկոսը աշխատանքի տեղաւորուած են:*

*Այս տարեշրջանին Գալիֆորնիայի համալսարաններու ճանաչում շնորհող մարմինը յատուկ հաղորդագրութիւնով մը առանձնացուցին Մաշտոց Գոլէճը որպէս հայագիտութեան եւ մանկավարժութեան գերազանց հաստատութիւն մը:*

---

## ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

*Շարունակուածէջ 15-էն*

*Աթոռին գոյութենէ դադրելն ու Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան միացեալ վերականգնումը կը հետապնդէր: Հոս եւս Ներսէս Պատրիարքի դերը մեծ եղաւ, երբ կրցաւ Շիրոյեան Կաթողիկոսին հաւատարմութեան ուխտ ստորագրել տալ եւ ուղարկել Մայր Աթոռ: Աղթամարի կաթողիկոսութիւնը արդէն վերջ կը գտնէր 1895 թուականին Շիրոյեան Կաթողիկոսի վախճանումով:*

### Սան Սթեֆանոյէն Պերլին

*Ներսէս Պատրիարքի օրով հայութեան սփոփանքի փոխարէն փորձանք կը դառնար եւրոպական ատեաններու առջեւ գաւառի հայոց բարենորոգութեան խնդիրը, նախ Կ. Պոլսոյ արուարձան Սան Սթեֆանոյի (Եշիլքէօյ), եւ ապա Գերմանիոյ Պերլինի զոյգ Համաժողովներուն առջեւ՝ հակառակ ակնկալուած յուսատու ելքին: Ներսէս Պատրիարք կարողացաւ խնդիրը Օրակարգի 16-րդ յօդուածի միջոցաւ ներմուծել առաջին ատեանին առջեւ, ուր ինք անձամբ գնաց հանդիպելու ռուս Եպարքոս Նիկոլային, որ բանակին գերագոյն հրամանատարն էր, եւ իր փոխանորդին, ներկայացնելով հայոց կրած տառապանքը քիւրտերու եւ ռուս Սիրքասիան ցեղախումբին կողմէ: Սան Սթեֆանոյի դաշինքը կնքուեցաւ 1878 Մարտ 3-ին, եւ առաջին անգամն ըլլալով հայ դատը եւրոպայի ուշադրութեան յանձնուեցաւ:*

*Յիշեալ դաշնագրով Ռուս Կայսրութիւնը Թուրքիոյ վեց վիլայէթներու հայոց վրայ պաշպան պիտի կանգնէր: Սոյն համաձայնութեան սակայն Անգլիա հակառակեցաւ, չարտօնելով ռուս ազդեցութիւնը Թուրքիոյ վրայ, եւ եւրոպայի այլ պետութիւններու աջակցութեամբ միասնաբար չէզոքացուց հայոց ի նպաստ եղած դիմումը: Անուններ՝ Անգլիոյ վարչապետ Տիզրայէլի եւ Գերմանիոյ վարչապետ Պիզմարք տխուր դեր կատարեցին եւ հայոց պետականութեան արգելք հանդիսացան իրենց քաղաքական հաշիւները փնտռելով:*

*Նոյն տարւոյն Յունիսի 13-ին երկրորդ ատեանը Պերլինի մէջ պիտի քննէր հարցը վերատեսութեան ենթարկելով Սան Սթեֆանոյի մնացորդացը: Բարդ էր կացութիւնը քանի որ Ներսէս Պատրիարք Թուրք պետութեան հաւանութիւնը պիտի ստանար, ինչպէս նաեւ Եւրոպայի ազգերուն խիղճը պիտի կրկին աթնցնէր հայկական բարենորոգութեանց խնդիրին բարւոք իրականացումը յուսալով: Այս բոլորը Ներսէս Պատրիարք կարողացաւ կատարել, եւ Պերլին ուղարկեց պատգամաւորութիւն մը նախկին Պատրիարք Մկրտիչ Խրիմեան Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ յայտնի ազգայիններով՝ Խորէն Եպիսկոպոս Նարպէյ, Մինաս Չերազ, եւ Ստեփան Փափազեան, որոնց յոյս յայտնեցին, եւ սակայն Պերլինի մէջ օրակարգին յօդուածը շրջեցին, ու յետաձգեցին որպէս թիւ 61-րդ յօդուած: Խրիմեան Հայրիկ Պերլինէն ձեռնունայն վերադարձին, «Թուղթէ շերեփի» օրինակով բացատրեց հայոց ապարդիւն ներկայութիւնը, մինչդեռ միւս ազգերը Համաժողովին «երկաթէ շերեփ գործածելով հարիսան լեցուցին իրենց ամաններուն մէջ»:*

### Մաղաքիա Օրմանեանի Վերադարձը

*Ներսէս Պատրիարքի օրով, 1879 թուին, երբ Մաղաքիա Վարդապետ Օրմանեան իր հետեւորդներով որոշեցին կաթոլիկ եկեղեցիէն բաժնուիլ եւ վերադառնալ Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ գիրկը, Օրմանեան անձամբ կը դիմէր Հայոց Պատրիարքարան ու իր խնդրանքը կը մատուցանէր Ներսէս Պատրիարքին: Իմաստուն Պատրիարքը առանց տարակուսելու կ՛ընդունէր դիմումը եւ նոյն օրն իսկ ծայրագոյն վարդապետի աստիճանները կը շնորհէր Օրմանեանի: Եօթանասունեւհինգ աշխարհականներու խումբ մը կը միանային Հայոց Պատրիարքութեան, եւ Օրմանեան իսկոյն պաշտօնի կը կոչուէր որպէս քարոզիչ: Հայ Եկեղեցւոյ համար յետագային Մաղաքիա Արքեպիսկոպոս Պատրիարքի դիրքն ու դերը առաւելագոյնս պիտի արդարացնէին Ներսէս Պատրիարքի անկաշկանդ եւ անմիջական հովանաւորութիւնը:*

*Ներսէս Վարժապետեան Ընտրեալ Կաթողիկոս Ամենայն Հայոց*

*1882-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կը վախճանէր Տ.Տ. Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Յաջորդ Կաթողիկոսի ընտրութեան համար միայն Ներսէս Պատրիարք Վարժապետեան արժանի կը նկատուէր ազգին կողմէ: Իր բացակայութեան եւ հակառակ իր կամքին եւ վատառողջ վիճակին, Մայր Աթոռի Ազգային-եկեղեցական Համագումարը 1884 Մայիս 9-ին զինք կ՛ընտրէր Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ռուսաց Կայսրն ալ կը վաւերացնէր: Սակայն իր կրկնակի հրաժարականներն ու վերահաս վախճանը նոյն տարին վերջ տուին ազգին փափաքին:*

### Կեդրոնական Վարժարանը

*Պոլսոյ Կեդրոնական Վարժարանը իր հիմնադրութեան 130 ամեակը կը տօնէ այս տարի (1886-2016) վկայելով սերունդներու հայ որակաւոր մշակներու պատրաստութեան սեպուհ գործը: Կեդրոնական Վարժարանի յղացողն ու հիմնադիրը եղաւ Ներսէս Պատրիարք Վարժապետեան, որ 1882 Դեկտեմբեր 16-ին հրաւիրելով բարերարներ ու մտաւորականներ միասնաբար հաստատեցին Պատրիարքին ծրագիրը եւ գործի լծուեցան: Ներսէս Պատրիարք գիտնալով որ իր վատառողջ վիճակով պիտի չկարենար գլուխն անցնիլ այդ մեծ գործին, նախապատիւ համարեց կտակով մը հաստատել վարժարանը: Առ այդ 1885-ին «Ներսէս Պատրիարք Վարժապետեան Հիմնադրամը» հաստատուեցաւ՝ առաջին գործադիր մարմինն ալ նշանակուելով, որոնք էին, Աբիկ Ունճեան, Ա. Կունդ, Մ. Եսայեան, Հ. Յակոբեան, Գ. Նորատունկեան, Ա. Կիւլպէնկեան, եւ Տ. Կիւմիւշկետան: Անդրանիկ հոգաբարձուները վերեւ յիշալներն էին, առաւել Ա. Հաճեան, Տ. Բարաղամեան, Կ. Սըվաճեան, Հ. Թորոսեան, Մինաս Չերազ (Տնօրէն), եւ Հ. Եուսուֆեան:*

*Կեդրոնական Վարժարանը իր դռները բացաւ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի վախճանումէն երկու տարի ետք՝ 1886 թուին 64 արական ուսանողներով, (շատ աւելի ուշ Վարժարանը երկսեռ եղաւ), եւ եօթ տարի ետք, 1891-ին, Կեդրոնականը ընծայեց 18 առաջին շրջանաւարտները: Կեդրոնական Վարժարանի հարիւրամեակը հանդիսաւորապէս տօնուեցաւ մօտիկ անցեալին, երբ արժանաւոր սաներէն մտաւորական ուսուցիչ Նուրհան Ուզունեան, այժմ հանգուցեալ, Մոնթրէալի մէջ հրատարակեց յիշարժան Յուշամատեան մը: Այսօր Կեդրոնական Վարժարանը իր առաքելութեան մէջ կը մնայ հաստատ եւ պատուաբեր յօրինակ այլոց ի յիշատակ հիմնադիր Երանաշնորհ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի:*



## Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

**Կը Կազմակերպէ**

## ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

**Տարիքային Բոլոր Խումբերու Համար**

**Ղեկավարութեամբ՝**

**Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր,**

**Ասմունքող Եւ Հեռուստալրագրող**

## ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

**Փորձերը տեղի կ'ունենան**

**ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ**

**1060 N.Allen Ave. Pasadena, CA 91104**

**Արձանագրութեան Համար Դիմել՝**

**Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662**

**Պր. Յարութ Տէրվիշօղլեանին Հեռ. 323-351-8001**

## ՊԱՍԿԵՏՊՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԵՒՐՈՊԱՅԻ ՓՈՔՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱԽՈՅԵԱՆ



Պասկետպոլի տղամարդկանց Հայաստանի նոր կազմաւորուած հաւաքականը նուաճեց Մոլդովայում անցկացուած Եւրոպայի փոքր երկրների առաջնութեան ախոյեանի կոչումը: Եզրափակիչում Տիգրան Գիոկթեանի գլխաւորած թիմը 79:71 հաշուով յաղթեց Անդորրայի հաւաքականին եւ առաջին անգամ նուաճեց այս տիտղոսը:

Յիշեցնենք, որ խմբային փուլում Հայաստանի թիմը 83:64 հաշուով յաղթել էր Մոլդովային, 92:40 ուժեղ էր գտնուել Ուելսից, 63:70 հաշուով պարտուել Անդորրային եւ B խմբից կիսաեզրափակիչ էր դուրս եկել երկրորդ տեղով: Կիսաեզրափակիչում Տիգրան Գիոկթեանի գլխաւորած թիմը 74:60 հաշուով յաղթել էր Իսլանդիայի հաւաքականին, որն առաջին տեղն էր գրաւել A ենթախմբում:

Փոքր երկրների առաջնութիւնում եզրափակիչ հասնելու շնորհիւ Հայաստանի հաւաքականն իրաւունք է նուաճել մասնակցել Եւրոպայի առաջնութեան խմբային մրցաշարին:

## ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ՝ MLS-Ի ԱՄՍՈՒԱՅ ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍՏ




Ամերիկեան «Ռեալ Սոլթ Լէյքի» յարձակուող Եուրա Մովսիսեանը MLS-ի կայքում անցկացուած հարցման արդիւնքում ճանաչուել է կանոնաւոր առաջնութեան Յունիս ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստ:

Հայաստանի հաւաքականից դուրս մնացած 28-ամեայ ֆուտպոլիստը ստացել է ձայների 36.77 տոկոսը: Երկրորդ տեղում յայտնուել է «Նիւ Եորք Սիթիի» կիսապաշտպան Ճէք Հարիսոնը (22.01 տոկոս ձայն), իսկ լաւագոյն եռեակը եզրափակել է «Ֆիլատելֆիայի» ենթայարձակուող Ռոլանդ Ալբերգը (21.15 տոկոս ձայն):

Յիշեցնենք, որ նախորդ ամիս Եուրա Մովսիսեանը 3 կոլ է խփել MLS-ի կանոնաւոր առաջնութիւնում:

Նա առաջին անգամ է ճանաչւում MLS-ի ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստ:

## ՌԻՕ-2016. ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՒԱՔԸ



Բռնցքամարտի Հայաստանի հաւաքականը գլխաւոր մարզիչ Կարէն Աղամալեանի գլխաւորութեամբ Յունիսի 29-ից Յուլիսի 11-ը Ծաղկաձորում անցկացնում է մարզումային հաւաք, որին մասնակցում են 12 մարզիկներ. Ալեն Դանիէլեան, Արթուր Յովհաննիսեան, Նարեկ Աբգարեան, Արամ Աւագեան, Կարէն Տոնականեան, Վլադիմիր Մարգարեան, Գոռ Երիցեան, Նարեկ Մանասեան, Արարատ Գիւլբանգեան, Գառնիկ Պապիկեան, Սերյոժա Յակոբեան, Դաւիթ Ասատրեան, հաղորդում է ՀԲՖ մամուլի ծառայութիւնը:

## ԿԱՐԼՈՍ ՏԵՒԵՍ. «ԼԻՈՆԵԼ ՄԵՍԻՆ ՅՈԳՆԵԼ Է ԱՐԺԵՆԹԻՆԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՑ ԵՒ ՖԵՏԵՐԱՑԻԱՅԻՑ»



Ֆուտպոլի Արժենթինայի հաւաքականի նախկին յարձակուող Կարլոս Տեւեսը ըմբռնումով է ընդունում Լիոնել Մեսիի որոշումը հեռանալ ազգային թիմից՝ քննադատելով Արժենթինայի ֆուտպոլային ասոցիացիային:

«Բացարձակ անկարգութիւն է տիրում Արժենթինայի ֆուտպոլի ասոցիացիայում: Լէոն տեսնում է, թէ ինչպէս են խաղացողները վերաբերւում Արժենթինայի հաւաքականում հանդէս գալուն, իսկ ֆետերացիան քամահրում է նրան եւ նրա դժգոհութիւնները: Պէտք է ամէն ինչ իր տեղը դնել: Լէոն յոգնել է այդ ամէնից, եւ դա նորմալ է: Ես էլ եմ մի քանի անգամ յոգնել հաւաքականից: Պէտք է ժամանակ տալ Մեսիին: Ակնյայտ է, որ Արժենթինայի հաւաքականն ունի նրա կարիքը: Հնարաւոր է՝ որոշ ժամանակ յետոյ նա ցանկանայ վերադառնալ: Նրան կը սպասեն»,- Կարլոս Տեւեսի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

Ամերիկայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում Չիլիին յետխաղեայ 11 մեթրանոցներով պարտուելուց յետոյ Մեսին յայտարարեց, որ այլեւս հանդէս չի գայ ազգային թիմում:

## «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԸ» ՊԱՏՐԱՍՏ Է 100 ՄԻԼԻՈՆ ՖՈՒՆՏ ՎՃԱՐԵԼ ՊՈԳԲԱՅԻ ՀԱՄԱՐ



«Մանչեսթեր Եունայթըտի» նորանշանակ պորտուգալացի գլխաւոր մարզիչ Ժոզէ Մոուրինյոն վճռական է տրամադրուած այս ամրանը ձեռք բերել Թուրինի «Յուվենտուսի» եւ Ֆրանսայի հաւաքականի կիսապաշտպան Պոլ Պոգբային: Անգլիական ակումբը շարունակում է բանակցել ֆուտպոլիստի գործակալ Մինօ Ռայոլայի հետ եւ պատրաստ է տրանսֆերի համար վճարել 100 միլիոն ֆունտ ստերլինգ:

Ռայոլան արդէն յաջողացրել է շուետ Զլատան Իբրահիմովիչի եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի տեղափոխութիւնները «Մանչեսթեր Եունայթըտ» եւ սպասում է, որ գործարքների շարքը նա կ՛աւարտի հենց Պոգբայի ռեկորդային տրանսֆերով: Եթէ դա տեղի ունենայ, 23-ամեայ ֆուտպոլիստը կը դառնայ առաջինը 100 միլիոն ֆունտ ստերլինգ արժողութեամբ տրանսֆերով: Սակայն Պոգբային ձեռք բերելու մեծ ցանկութիւն ունի նաեւ Մադրիդի «Ռեալի» գլխաւոր մարզիչ Զինեդին Զիդանը, եւ այդ գործօնը կարող է ֆուտպոլիստին ստիպել հրաժարուել «Մանչեսթեր Եունայթըտի» տարբերակից:

## «ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՆԵՅՄԱՐԻ ՏՐԱՆՍՖԵՐԻ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼ Է 200-250 ՄԻԼԻՈՆ ԵՒՐՈ



«Բարսելոնայի» հետ հինգ տարուայ նոր պայմանագիր կնքած պրազիլացի յարձակուող Նեյմարի ամրագրուած նուազագոյն տրանսֆերային արժէքը բարձրացել է: Պայմանագրի առաջին տարուայ ընթացքում 24-ամեայ ֆուտպոլիստին գնել ցանկացող ակումբը պէտք է առաջարկի առնուազն 200 միլիոն եւրօ, երկրորդ տարում՝ 222 միլիոն, վերջին երեք տարիներին՝ 250 միլիոն եւրօ, հաղորդում է կատալոնական ակումբի պաշտօնական կայքը: Նախորդ պայմանագրով Նեյմարի տրանսֆերն արժեր 190 միլիոն եւրօ: Ֆուտպոլիստի նոր պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2021թ. Յունիսի 30-ը:

«Բարսելոնայում» անցկացրած նախորդ երեք տարիներին Նեյմարը մասնակցել է 141 հանդիպման, խփել է 85 գոլ, նուաճել է 8 թիմային տիտղոս:

---

Յիշեցնենք, որ Ռիոյի Օլիմպիական խաղերի ուղեգիր են նուաճել 49 կգ քաշային Արթուր Յովհաննէսեանը, 52 կգ քաշային Նարեկ Աբգարեանը, 56 կգ քաշային Արամ Աւագեանն ու 69 կգ քաշային Վլադիմիր Մարգարեանը: Օլիմպիական նախապատրաստական փուլը Հայաստանի թիմը սկսել էր Յունիսի սկզբին Կիեւում անցկացրած համատեղ հաւաքով: